Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան, Ն. Տողանյան, Լ. Ավագյան

Մաս 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՐԵՎԱՆ

ՄԱՆՄԱՐ
MANMAR

2022

ՀՏԴ 373.167.1:502(075.3)
ԳՄԴ 20.1g72
Ե 580

Հեղինակներ՝ Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան, Ն. Տողանյան, Լ. Ավագյան

Խմբագիրներ՝ Ա. Հովսեփյան, Ն. Տողանյան

Քարտեզները՝ Վ. Մխիթարյանի

Նկարիչ՝ Հ. Կարապետյան

Ե 580 Ես և շրջակա աշխարհը: Հանրակրթական դպրոցի 4-րդ դաս. դասագիրք /Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան, Ն. Տողանյան, Լ. Ավագյան / -Եր.: ՄԱՆՄԱՐ, 2022. - 112 էջ:

ՀՏԴ 373.167.1:502(075.3)
ԳՄԴ 20.1g72

ISBN 978-9939-62-193-7

© Հովսեփյան Ա., Հովհաննիսյան Գ.,
Տողանյան Ն., Ավագյան Լ., 2012
© ՄԱՆՄԱՐ, 2012

Դաս 25 Գյուղատնտեսություն

Ինչ բույսեր գիտես, որ աճեցնում է մարդը: Ինչ ընտանի կենդանիներ գիտես. ինչ է ստանում մարդը նրանցից:

Արդյունաբերության նման **գյուղատնտեսությունը** ևս տնտեսության խոշոր ճյուղերից է: Այն զբաղված է մշակաբույսերի աճեցմամբ և ընտանի կենդանիների բուծմամբ: Երկրագնդի տարբեր վայրերում մշակվում են տարբեր բույսեր և բուծվում տարբեր կենդանիներ: Օրինակ՝ Հայաստանի բնական պայմանները թույլ չեն տալիս, որպեսզի մեզ մոտ աճի արմավենի կամ նարինջ: Դրա փոխարեն մեր երկրում աճում է հյութալի ծիրան, դեղձ, խնձոր և այլն:

Գյուղատնտեսությունը բաժանվում է **բուսաբուծության** և **անասնապահության**:

Բուսաբուծությունը զբաղվում է զանազան մշակաբույսերի աճեցմամբ: Բուսաբուծության մեջ առաջնակարգ նշանակություն ունի **ցորենի** մշակությունը, որը մարդկության մեծ մասի հացն է: Աշխարհի շատ երկրներում ցորենից հետո մարդիկ իրենց սննդի մեջ ամենից շատ օգտագործում են **կարտոֆիլ**, դրա համար էլ այն անվանում են «երկրորդ հաց»: Մարդն աճեցնում է նաև բրինձ, գարի, բազուկ, գազար, վարունգ, պոմիդոր, սուրճ, թեյ, մրգեր, խաղող, ձմերուկ, բամբակենի և այլն (նկ. 36):

Նկ. 36 Խաղողի այգի

Մշակաբույսերի մեծ մասը մարդիկ օգտագործում են որպես սննդամթերք: Մյուս մասը կեր է ընտանի կենդանիների համար: Մշակաբույսերի մի մասն էլ, օրինակ՝ շաքարի ճակնդեղը, բամբակենին, վուշը, հումք են թեթև և սննդի արդյունաբերությունների համար: Շաքարի ճակնդեղից ստանում են շաքար, բամբակից և վուշից՝ թել:

Անասնապահությունը զբաղվում է ընտանի կենդանիների բուծմամբ: Անասնապահական մթերքները մեզ համար ևս արժեքավոր սնունդ են: Օրինակ՝ դու արդեն գիտես, որ մարդու օրգա-

նիզմի համար խիստ կարևոր են միսը և կաթնամթերքը: Բացի այդ, տարբեր ընտանի կենդանիներից մենք ստանում ենք բուրդ, կաշի, փետուր, որոնք էլ հումք են դառնում գործվածքի, հագուստի, կոշիկի, գորգերի համար: Ընտանի կենդանիները նույնպես բազմազան են: Դրանց շարքում կան կաթնասուններ (կով, ոչխար), թռչուններ (հավ, սագ), ձկներ (իշխան, սիգ), միջատներ (մեղու): Ձկներ բուծելու համար մարդը հաճախ ստեղծում է արհեստական լճակներ և ջրամբարներ:

Անասնապահության համար մարդը որպես կեր օգտագործում է բնության բարիքները և իր աճեցրած բույսերը: Հայաստանում ամռանը կովերին, ոչխարներին, այծերին կարելի է հանդիպել հիմնականում լեռնային արոտներում, որտեղ նրանք սնվում են հյութալի խոտաբույսերով: Այստեղ են նաև տեղափոխում մեղուների փեթակները, որովհետև շատ են բազմերանգ ծաղկաբույսերը:

Միաժամանակ մարդը հատուկ գործարաններում արտադրում է համակցված կերեր, որոնք պարունակում են կենդանիներին շատ անհրաժեշտ սննդարար նյութեր:

Այն մարդկանց, ովքեր զբաղվում են միայն գյուղատնտեսական մշակաբույսեր աճեցնելով, անվանում են **հողագործներ** կամ **երկրագործներ**, իսկ ովքեր բուծում են միայն կենդանիներ՝ **անասնապահներ**: Շատ մարդիկ զբաղվում են թե՛ մեկով և թե՛ մյուսով: Նրանց էլ սովորաբար անվանում են **ագարակատերեր** (ֆերմերներ):

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչ է գյուղատնտեսությունը, և ինչ ճյուղերից է բաղկացած այն:**
2. **Ինչո՞վ է զբաղվում բուսաբուծությունը, և ինչ բույսեր է աճեցնում մարդը սննդամթերք ստանալու, անասնակերի և արդյունաբերության համար:**
3. **Ինչո՞վ է զբաղվում անասնապահությունը:**
4. **Օրվա ընթացքում բուսաբուծությունից և անասնապահությունից ստացված ինչ մթերք ես օգտագործում քո սննդի մեջ:**

5. **Ինչպե՞ս են միմյանց հետ կապված բուսաբուծությունը և անասնապահությունը:**
6. **Ի՞նչ կապ կարող է լինել գյուղատնտեսության և արդյունաբերության միջև:**

Ես արդեն գիտեմ...

Գյուղատնտեսությունը տնտեսության խոշոր ճյուղերից մեկն է: Այն բաղկացած է բուսաբուծությունից և անասնապահությունից: Բուսաբուծությունը զբաղվում է մշակաբույսերի աճեցմամբ, իսկ անասնապահությունը՝ ընտանի կենդանիների բուծմամբ: Գյուղատնտեսական արտադրանքը սննդամթերք է ծառայում մարդկանց և հումք՝ արդյունաբերության համար:

Ինչ մասնագիտություններ ունեն նկարներում պատկերված մարդիկ:

Կարտոֆիլի մասին

Կարտոֆիլի հայրենիքը Հարավային Ամերիկան է: Այստեղ կարտոֆիլ սկսել են մշակել մեզանից դեռևս 14 հազար տարի առաջ: Կարտոֆիլը Եվրոպա է բերվել 16-րդ դարի 2-րդ կեսում, իսկ Հայաստան՝ 1840-ական թվականներին:

Ֆրանսիայում կարտոֆիլը մատուցում էին թագավորական սեղաններին, իսկ գյուղացիները անվստահությամբ էին լցված հեռուներից բերված այդ բույսի նկատմամբ:

Կարտոֆիլի մշակումը ընդարձակելու նպատակով ֆրանսիացի անվանի դեղագործ Պարմանտիեն դիմում է մի հետաքրքիր խորամանկության: Իր ընդարձակ հողամասում նա տնկում է կարտոֆիլ և հողամասը պարսպապատում: Պարսպի վրա մի քանի տեղ փակցնում է հայտարարություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Խիստ կպատժվեն նրանք, ովքեր կփորձեն գողանալ այստեղ ցանված թանկագին բույսի պալարները»: Խելացի դեղագործի հնարամտությունը մեծ հաջողություն ունեցավ: Գիշերը գյուղացիները գողացան հողամասի բոլոր պալարները: Ամեն մեկն աշխատում էր այն շուտ տնկել իր հողամասում: Եվ արդեն մի քանի տարի հետո դաշտերի մեծ մասը ծածկված էր կարտոֆիլի ցանքերով:

Այսպես կարտոֆիլը տարածվեց աշխարհով մեկ:

Հանելուկ

Այն ո՞ր ծառն է սովորական,
Որ չի ծաղկում ոչ մի գարնան,
Մենք սիրում ենք պտուղն ուտել,
Իսկ տերևը դառնում է թել:
(վղզelel)

Երկարավուն, ձվաձև,
Փայլուն՝ որպես ձվածեղ,
Միսը փափուկ ու անուշ,
Կորիզը համեղ՝ որպես նուշ,
Իր անունը եթե տան,
Պիտի հիշես Հայաստան:
(ղmվվջ)

Երբ մարդու հետ ընկերացան,
Իրենց չվելը մոռացան,
Մարդուց առան կեր՝ կուտ ու ջուր,
ՈՒ տվեցին միս ու փետուր:
(Սդղղուհշալ վղոտղմ)

Դաս 26 Տրանսպորտ

Մարդկանց և բեռների փոխադրման ինչ միջոցներ գիտես: Փոխադրման ինչ միջոցներից ես երբևէ օգտվել:

Տրանսպորտի միջոցով է կատարվում մարդկանց և զանազան բեռների փոխադրումը տեղից տեղ: Այդ փոխադրումները կատարվում են ցամաքով, օդով, ջրով և նույնիսկ՝ գետնի տակով: Եվ դրան համապատասխան էլ գոյություն ունեն տրանսպորտի տարբեր տեսակներ՝ ցամաքային (երկաթուղային, ավտոմոբիլային), օդային և ջրային:

Տրանսպորտը չափազանց կարևոր նշանակություն ունի մեր ողջ կյանքի և տնտեսության համար (ինչ նշանակություն կարող ես նշել):

Նկարով որոշիր տրանսպորտի հին և նոր տեսակները:



Ի՞նչ ծառայություններ են մատուցում նկարում պատկերված հատուկ տրանսպորտի միջոցներից յուրաքանչյուրը:

Նկարներով որոշի՛ր, թե ի՞նչ կարելի է տեղափոխել տրանսպորտի տարբեր տեսակների օգնությամբ:

Երևանի մետրոպոլիտենի սխեման



Ծառայությունների ոլորտ

Ինչ են ծառայությունները:

Տարբեր ծառայություններ մեզ մատակարարում են ջուր, գազ, էլեկտրաէներգիա և այլն:

Ուշադիր դիտիր նկարը և պատասխանիր հետևյալ հարցերին.

1. Ինչ ծառայություններ են մատուցվում նկարում պատկերված տեղերում:
2. Ինչ մասնագիտության տեր մարդիկ են մատուցում այդ ծառայությունները:

3. **Ո՞ր ծառայություններից ես երբևէ օգտվել կամ պատրաստվում ես օգտվել:**
4. **Ի՞նչ գնումներ ես կատարել խանութներից վերջին օրերին:**

Ես արդեն գիտեմ...

Տրանսպորտի միջոցով է կատարվում մարդկանց և զանազան բեռների փոխադրումը տեղից տեղ: Հատուկ ծառայությունները մեզ մատակարարում են ջուր, գազ, էլեկտրականություն և այլն:

Դաս 27 Ի՞նչ է փողը

Արդեն իմացար, որ մարդիկ գործարաններում, ֆաբրիկաներում արտադրում են բազմատեսակ ապրանքներ, գյուղատնեսությամբ զբաղվողները աճեցնում բույսեր ու բուծում կենդանիներ: Այսպես, օրինակ՝ գյուղացու աճեցրած խաղողից գինու գործարանում ստանում են գինի: Իսկ հրուշակեղենի ֆաբրիկայում արտադրում են քո սիրած շոկոլադները, ավտոգործարանում՝ քո սիրելի ավտոմեքենաները և այլն: Իսկ ի՞նչ է տեղի ունենում այս ապրանքների հետ հետագայում: Յուրաքանչյուր ապրանք ի վերջո պետք է հասնի իր սպառողին: Դրա համար անհրաժեշտ է կատարել **ապրանքների փոխանակում**: Գոյություն ունի ապրանքների փոխանակման երկու ձև՝ **ապրանքափոխանակությունը** և **առք ու վաճառքը**:

Ապրանքափոխանակությունը մեկ ապրանքը կամ ծառայությունը մեկ այլ ապրանքով (կամ ծառայությամբ) փոխանակելն է: Օրինակ՝ պատկերացրու, որ դու գործարանատեր ես և արտադրում ես մանկական խաղալիքներ: Քեզ և քո աշխատողներին անհրաժեշտ է ձեռք բերել ձմեռային հագուստ, որն արտադրում է ձեր հարևան հագուստի ֆաբրիկան, իսկ այդ ֆաբրիկայի աշխատակիցներին էլ պետք են Նոր տարվա խաղալիքներ, որոնք դուք եք արտադրում: Դուք պայմանավորվում եք և կատարում փոխանակում, այսինքն՝

ապրանքափոխանակություն (խաղալիքները փոխանակում եք հագուստով):

Այսպիսի փոխանակում հավանաբար դու էլ ես կատարել, երբ քո դասընկերոջ հետ փոխանակել ես գունավոր մատիտներ, դրոշմանիշներ և այլն:

Առաջին հայացքից թվում է, թե նման փոխանակումները շատ հեշտ են և հարմար: Բայց իրականում այդ ամենը իրականացնելը շատ բարդ է, գրեթե անհնարին: Պատկերացրու, որ քեզ անհրաժեշտ են հաց, ատամի մածուկ, կոշիկներ և այլ կարևոր իրեր: Դրանք ձեռք բերելու համար դու ինչ ապրանք կառաջարկես, եթե ինքդ ոչինչ չես արտադրում և ոչ մի ծառայություն չես մատուցում: Այդ դեպքում դժվարին խնդրի առաջ կկանգնես:

Փոխանակման ձևերից առավել հարմար է ապրանքների և ծառայությունների **առք ու վաճառքը**: Դա այնպիսի փոխանակում է, որն իրականացվում է **փողի** միջոցով: Գնել կամ վաճառել որևէ ապրանք նշանակում է՝ այն վերածել որոշակի քանակության փողի: Փողով կարելի է որոշել ապրանքի **արժեքի չափը**:

Ցանկացած արտադրող մեզ անհրաժեշտ ապրանքը մեծ սիրով կտրամադրի փողով, իսկ այդ փողով ինքն իր հերթին կգնի այն ամենը, ինչ իրեն անհրաժեշտ է: **Ստացվում է, որ փողը յուրատեսակ վճարման միջոց է, ապրանքների արժեքի չափման միավոր:**

Փողը ծագել է շատ հին ժամանակներից: Այն ցանկացած ապրանք ձեռք բերելու կամ ծառայությունից օգտվելու ամենահարմար միջոցն է մնացել մինչև այսօր: Փողը համարվում է մարդկության խոշոր գյուտերից մեկը: Հին ժամանակներում որպես փող ծառայել են խեցիները, կենդանիների մորթիները, իսկ Խաղաղ օվկիանոսի կղզիներից մեկում՝ նույնիսկ խոզի պոչը: Այնուհետև դրանց փոխարինել են տարբեր մետաղներից ձուլված դրամները, իսկ ավելի ուշ՝ թղթադրամները: Հայաստանում հայտնի էին Տիգրան Մեծ, Արտավազդ 2-րդ և այլ հայ թագավորների կողմից հատված մետաղադրամները:

1918 թվականին Հայաստանի առաջին հանրապետությունում ստեղծված դրամական միավորը **հայկական ռուբլին** էր: Այժմ աշխարհի տարբեր երկրներում օգտագործվում են տարբեր դրամական միավորներ: Ժամանակակից Հայաստանի Հանրապետության դրամական միավորը **դրամն** է: Քեզ ծանոթ են նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների դրամական միավորը՝ **ԱՄՆ դոլարը ($)**, Ռուսաստանի Դաշնության **ռուբլին**: Եվրոպական շատ երկրներում գործածվող միասնական դրամական միավորը **եվրոն (€)** է:

Տիգրան Մեծ և Արտավազդ 2-րդ թագավորների պատկերներով մետաղադրամներ

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչո՞ւ են մարդիկ կատարում ապրանքների փոխանակում:**
2. **Ի՞նչ է ապրանքափոխանակությունը:**
3. **Ինչո՞ւ է որպես փոխանակման ձև նպատակահարմար ապրանքների և ծառայությունների առք ու վաճառքը:**
4. **Ինքնուրույն ուսումնասիրի՛ր և քո տետրում գրի՛ր Հայաստանին հարևան երկրների դրամական միավորների անունները:**

Եվ սրդեն գիրքեմ...

Գոյություն ունի ապրանքների փոխանակման երկու ձև՝ ապրանքափոխանակությունը և առք ու վաճառքը: Ապրանքափոխանակությունը մեկ ապրանքը կամ ծառայությունը մեկ այլ ապրանքով (կամ ծառայությամբ) փոխանակելն է: Փողը յուրատեսակ վճարման միջոց է, ապրանքների արժեքի չափման միավոր: Աշխարհի երկրների մեծ մասն ունի սեփական դրամական միավորը:

Գիտե՞ք, որ...

1945 թվականին Հայաստանի Հանրապետության ներկայիս Սյունիքի մարզի Սառնակունք գյուղում գտնվել է գանձ, որտեղ միայն հին արծաթե դրամներ էին: Այն ուսումնասիրվեց դրամագետների կողմից, և պարզվեց, որ այդ գանձը թաքցվել է մեզանից շուրջ 2000 տարի առաջ: Հետագայում այդ վայրում հայտնաբերվեց այդ ժամանակների 9 պետությունների 373 արծաթե դրամ: Դրանցում ամենաշատը հռոմեական դրամներն էին (225 հատ): Մնացածը հայկական, պարթևական, փյունիկյան, մակեդոնական և այլ երկրների դրամներ էին:

Դաս 28 Ինչպես փրկել երկրագնդի բնությունը

Շատ դարեր առաջ մարդիկ ապրում էին պարզ կյանքով: Նրանք զբաղվում էին քեզ ծանոթ հողագործությամբ, անասնապահությամբ, հիմնում էին փոքրիկ բնակավայրեր, բրոնզից ու երկաթից պատրաստում էին տարբեր գործիքներ, նույնիսկ զենքեր: Անվիճելի է, որ այդ ամենը հնարավոր էր իրականացնել միայն բնության բարիքների (հարստությունների) օգտագործման կամ, ինչպես ընդունված է ասել, «շահագործման» շնորհիվ: Անտառային վայրերում ապրող մարդիկ հեկտարներով այրում էին անտառները՝ այն վարելահողի վերածելու համար, սնվելու համար հավաքում էին վայրի բույսեր, որսում վայրի կենդանիներ: Սակայն բնության վրա մարդու ազդեցության հետևանքները այդքան էլ զգալի չէին, որովհետև բնությունը կարողանում էր ինքնուրույն **«վերականգնել իրեն հասցված փոքրիկ վերքերը»**:

Մարդու ազդեցությունը բնական միջավայրի վրա կտրուկ մեծացավ շուրջ 300 տարի առաջ, երբ մեծ թափով սկսեց զարգանալ արդյունաբերությունը: Արտադրության աստիճանաբար մեքենայացումը հանգեցրեց նրան, որ մարդիկ սկսեցին ավելի մեծ քանակությամբ բնական հարստություններ վերցնել բնությունից:

Նկ. 37 Շահագործվող հանքավայր

Պատկերացնո՞ւմ ես, որ միայն վերջին 100 տարում մարդիկ երկրի ընդերքից արդյունահանել են այնքան օգտակար հանածոներ, որքան մինչ այդ՝ մարդկության ողջ պատմության ընթացքում (նկ. 37): Ընդարձակվել են հին քաղաքները, կառուցվել են նորերը, խոշոր արհեստական շինություններ՝ արհեստական ջրամբարներ, ցամաքային հաղորդակցության ուղիներ և այլն: Ընդհանուր առմամբ մարդն արդեն կառուցապատել է երկրագնդի այնքան մասը, որը գրեթե 150 անգամ գերազանցում է Հայաստանի Հանրապետության տարածքը:

Այժմ մարդու ազդեցությունը բնության վրա այնպիսի վտանգավոր չափերի է հասել, որ բնությունը հաճախ ի վիճակի չի լինում ինքնուրույն վերականգնելու իրեն հասցված վնասները: **Մարդու կողմից բնության աղտոտման անասելի չափերը արդեն վտանգում են ոչ միայն շատ բույսերի ու կենդանիների, այլ մեր իսկ առողջությունը, նույնիսկ՝ գոյությունը:**

Արդյունաբերական տարբեր ձեռնարկություններից արտանետված գազերի քանակը տարեցտարի շատանում է: Այդ գազերը, ինչպես ջերմոցում, «թաղանթի» պես ծածկել են երկրագնդի օդային ավազանը և չեն թողնում, որ Արեգակից ստացված

ջերմությունը նորից վերադառնա տիեզերք: Ջերմության այդ ավելցուկի պատճառով բևեռային շրջաններում սկսել են հալչել հսկա սառցադաշտերը, որի հետևանքով, ըստ գիտնականների կանխատեսումների, մինչև 60մ կարող է բարձրանալ Համաշխարհային օվկիանոսի մակարդակը: Համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրացման հետևանքով ջրով կծածկվեն ծովափնյա լայնարձակ հարթավայրերի հսկայական տարածքներ:

Դու արդեն գիտես, որ մարդու և կենդանի օրգանիզմների համար կենսական նշանակություն ունեցող թթվածին գազը արտադրում են կանաչ բույսերը: Մթնոլորտի թթվածին արտադրող հիմնական «ֆաբրիկաները» անտառներն են:

Նկ. 38 Անտառահատում

Տնտեսության կողմից փայտի պահանջարկը անընդհատ աճում է, դրա համար էլ անընդհատ աճում է նաև հատվող անտառների քանակը (նկ. 38): Քեզ հայտնի է, որ յուրաքանչյուր ծառի աճը տևում է տարիներ, իսկ այն կարելի է ոչնչացնել մեկ ակնթարթում: Անտառները վերականգնվում են ծառերի, թփերի աճի բնական արագությամբ, որը մի քանի անգամ զիջում է անտառահատման արագությանը: Երկրագնդի անտառների կրճատման հետևանքով Աֆրիկայի, Ասիայի անծայրածիր անապատները ընդարձակվում են, անդառնալիորեն ոչնչանում են անտառային արժեքավոր բուսատեսակները, կենդանիների բնակության վայրերը և այլն:

Նկ. 39 Երկրագնդի բնության պահպանության խնդիրներին նվիրված միջազգային գիտաժողով

Մարդու ազդեցությունը բնության վրա այնպիսի չափերի է հասել, որ երկրագնդի բնական միջավայրի բոլոր խնդիրները հիմնավորապես լուծելու համար անհրաժեշտ է միավորել ողջ մարդկության, աշխարհի բոլոր երկրների ջանքերը (նկ. 39):

Այդ է պատճառը, որ աշխարհի երկրները, իրար հետ համագործակցելով, իրականացնում են բնապահպանական տարաբնույթ միջոցառումներ՝

- կրճատում են մթնոլորտ արտանետվող «ջերմոցային» գազերի քանակը,
- վերականգնում կամ տնկում են նոր անտառներ,
- կառուցում են գետերի, լճերի և այլ ջրավազանների ջրերը թունավոր նյութերից մաքրող կայաններ,
- բույսերի, կենդանիների և բնական միջավայրի այլ բաղադրիչների պահպանության նպատակով հիմնում են բնության՝ հատուկ պահպանվող տարածքներ՝ ազգային պարկեր, արգելոցներ և այլն:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչպե՞ս է մարդն ազդել բնության վրա շատ դարեր առաջ: Ինչո՞ւ էր բնությունը կարողանում արագ վերականգնել իրեն հասցված փոքրիկ «վերքերը»:**
2. **Ինչո՞ւ և ինչպե՞ս է այժմ մեծացել բնության վրա մարդու ազդեցությունը:**
3. **Ի՞նչ խնդիրներ են առաջացել մթնոլորտի աղտոտման, անտառների կրճատման հետևանքով:**
4. **Թվարկի՛ր շրջակա միջավայրի առողջացման միջոցառումներ:**

Ես արդեն գիտեմ...

Շատ դարեր առաջ բնությունը կարողացել է ինքնուրույն վերականգնել իրեն հասցված վնասները: Արտադրության աստիճանաբար մեքենայացումը հանգեցրեց նրան, որ մարդիկ սկսեցին ավելի մեծ քանակությամբ բնական հարստություններ վերցնել բնությունից: Անտառները վերականգնվում են ծառերի, թփերի աճի բնական արագությամբ, որը մի քանի անգամ զիջում է անտառահատման արագությանը: Բնական միջավայրի շատ խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ է միավորել ողջ մարդկության ջանքերը:

Գիտե՞ք, որ...

Օրհուսի կոնվենցիան

1998 թվականին Դանիայի Օրհուս քաղաքում Եվրոպայի 39 երկրների կողմից ստորագրվել է «Կոնվենցիա (միջազգային համաձայնագիր) շրջակա միջավայրի հարցերին վերաբերող տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացում հասարակության և արդարադատության մատչելիության մասին»: 2001թ. այս կոնվենցիային միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը: Այս փաստաթղթով դու իրավունք ես ստացել իմանալու քո առողջությունը վտանգող ամեն ինչի մասին՝ խմելու ջրի, օդային ավազանի մաքրության, սննդամթերքի որակի և այլն: Միաժամանակ, դու իրավունք ես ստացել պետական մարմիններից քեզ անհանգստացնող էկոլոգիական ցանկացած հարցի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ստանալու: Պետական մարմինները շրջակա միջավայրի վերաբերյալ քեզ հետաքրքրող ցանկացած հարցի վերաբերյալ պարտավոր են տրամադրել սպառիչ տեղեկատվություն: Այս կոնվենցիան ստորագրած երկրները պարտավորվել են շրջակա միջավայրի շուրջ ծագած խնդիրների վերաբերյալ որոշումներին մասնակից դարձնել հասարակությանը, իսկ վիճելի հարցերի դեպքում ապահովել մատչելի արդարադատություն:

Դաս 29 Բնությունը մարդու ստեղծագործություններում

Շաքիի ջրվեժը

Ջրվեժը ժայռի գագաթից կախված
Զանգ է վիթխարի:
Առվակը զանգի լեզվակից կախված
Պարան է ձորում:
Հեռավոր հովտում
Գետը բռնել է ծայրը պարանի,
Քաշում է անվերջ:
Եվ ղողանջում է զանգը օրնիբուն
Եվ արձագանք է տալիս ձորի մեջ:

Հ. Սահյան

Ուշադի՛ր դիտիր նկարը, ապա կարդա՛ բանաստեղծությունը: Երկուսում էլ տեսնում ես բնության պատկերներ: Նկարում պատկերված է բնության մի գեղեցիկ դրվագ, որը շատ դուր է եկել լուսանկարչին, և նա որոշել է անմահացնել այդ տեսարանը: Այս պատկերը մեզ հիացնում է: Այդպիսին է նաև բանաստեղծությունը: Այստեղ էլ բանաստեղծն է ոգեշնչվել բնության զարմանահրաշ գեղեցկությամբ և իր ապրումներն ու հիացմունքը արտահայտել բանաստեղծության միջոցով: Երբ մենք կարդում ենք այս տողերը, անմիջապես մեզ են փոխանցվում հեղինակի ապրումները, և անմիջապես պատկերացնում ենք շառաչուն ջրվեժը:

Բնության տարբեր հրաշքներին դու արդեն ծանոթացել ես նախորդ դասարաններից, նույնիսկ գրել ես փոքրիկ շարադրություններ, նկարել ես տարվա տարբեր եղանակներին, օրվա տարբեր ժամերին քո շրջապատի բնության պատկերներ: Դու գիտես, որ մենք օգտվում ենք բնության բազմաթիվ հարստություններից: Այս ամենից զատ, բնությունը մեզ պարգևում է նաև շատ գեղեցիկ հույզեր և զգացողություններ: Օրինակ՝ ցանկացած մարդ անփոխարինելի ապրումներ է ունենում, երբ բնության գրկում ունկնդրում է առվակի քչքչոցը, տերևների խշշոցը կամ նայում է սաղարթախիտ անտառներին, կապուտաչյա լճի ջինջ ջրերին և այլն:

Բնությունը ոգեշնչել է շատ ստեղծագործողների՝ գրողների, բանաստեղծների, նկարիչների, երաժիշտների, քանդակագործների և այլն:

Ալպիական մանուշակ

Նկարում պատկերված այս գեղեցիկ ծաղիկը ալպիական մանուշակն է: Մեզանից յուրաքանչյուրը կարող է նկարագրել այս ծաղիկը, բայց տեսեք, թե ինչպես է դա արել հայ մեծ գրող Ակսել Բակունցը. «Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն: Արևից քարերը տաքանում են, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում քարին»: Բնությունից ոգեշնչվել են

նաև երգահանները և իրենց զգացմունքներն արտահայտել երաժշտական կախարդական հնչյունների միջոցով: Իտալացի մեծ երգահան Անտոնիո Վիվալդին, օրինակ, գրել է «Տարվա եղանակները» վերնագրով մի հիասքանչ երաժշտական ստեղծագործություն: Այստեղ նա երաժշտական կախարդական հնչյունների միջոցով արտահայտել է տարվա չորս եղանակների գեղեցկությունը:

Ունկնդրի՛ր Վիվալդիի «Տարվա եղանակներ» ստեղծագործությունից որևէ հատված (տարվա որևէ եղանակ) և համառոտ ներկայացրու տպավորություններդ:

Այս ամենը հրաշալի է, սակայն չի կարող փոխարինել բնության գրկում գտնվելու ընթացքում մեր մեջ արթնացող զգացմունքներին: Երբ դու գտնվում ես բնության գրկում, փորձի՛ր ուշադիր լինել բնության գեղեցկությունների նկատմամբ, ոչինչ թող չվրիպի քո աչքից: Քո առջև բացվող տեսարաններին փորձի՛ր նայել նկարչի, քանդակագործի, բանաստեղծի աչքերով: Այդ դեպքում դու կտեսնես, որ բնությունն իսկապես շատ գեղեցիկ է, կսովորես գնահատել այն և կձգտես պահպանել այդ մեծ հարստությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչպե՞ս են նկարիչն ու բանաստեղծը պատկերել բնությունը:**
2. **Դիտի՛ր ալպիական մանուշակի նկարը և 2-3 նախադասությամբ ինքնուրույն նկարագրի՛ր այն:**
3. **Բնությանը նվիրված երաժշտական ի՞նչ ստեղծագործություններ գիտես:**
4. **Ի՞նչ է տալիս մարդուն բնության գեղեցկությունը:**

Ես արդեն գիտեմ...

Բնությունը ոգեշնչել է շատ ստեղծագործողների՝ գրողների, բանաստեղծների, նկարիչների, երաժիշտների, քանդակագործների և այլն: Երբ դու գտնվում ես բնության գրկում, փորձի՛ր ուշադիր լինել բնության գեղեցկությունների նկատմամբ, ոչինչ թող չվրիպի քո աչքից:

Դաս 30 Հարցեր և առաջադրանքներ «Բնությունը և մարդը» գլխի կրկնության համար

1. Ընտրե՛ք որևէ արտադրանք և խմբով որոշե՛ք, թե ի՞նչ աշխատանքի առարկաներ և միջոցներ են անհրաժեշտ այն ստեղծելու համար:
2. Դասընկերներով կազմե՛ք Ձեր քաղաքում կամ գյուղում արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների ցանկը:
3. Ինչո՞ւ մարդը չի կարող խուսափել իր շրջակա բնությունը վերափոխելուց: Բե՛ր մի քանի փաստարկ:
4. Ընտրե՛ք թեթև մարդատար որևէ ավտոմեքենա և ուսուցչի օգնությամբ փորձե՛ք ճշտել, թե արդյունաբերության ի՞նչ ճյուղեր են մասնակցում դրա ստեղծմանը:
5. Ի՞նչ մշակաբույսեր են աճեցնում և ի՞նչ կենդանիներ են բուծում քո շրջակա տարածքում: Ի՞նչ ապրանքներ են ստանում այդ կենդանիներից ու բույսերից:
6. Տրանսպորտի ի՞նչ տեսակներ են բացակայում քո բնակավայրում: Տրանսպորտային ի՞նչ ուղիներ կկառուցեիր քո բնակավայրում:
7. Պատկերացրո՛ւ՝ շուկա են եկել դարբինը, բրուտը, կոշկակարը, որպեսզի փոխանակեն իրենց ապրանքները: Դարբնին կոշիկ է պետք, բրուտին՝ վերնաշապիկ, կոշկակարին՝ գինու սափոր: Ինչպե՞ս նրանք կկատարեն ապրանքների փոխանակումը:
8. Ի՞նչ կլինի, եթե մարդու գործունեության հետևանքով վերանա անտառը (նշի՛ր 3–4 հետևանք):
9. Ի՞նչ ծառայություններ կառաջարկեիր քո համայնքի բնակիչներին:
10. Ձեր մոտակա խանութից պարզի՛ր, թե արտասահմանյան երկրներից բերված ի՞նչ ապրանքներ կան:

Դաս 31 Հայաստանն իմ հարենիքն է: Հայաստանի Հանրապետություն

Հայը դարերով սիրով է պահել
Յոթ թանկ սրբություն՝
Գիրքը, Մասիսը, շինարար ոգին,
Հավատը, լեզուն.
Սուրբ անուններ են եղել դարերով
Հայ ընտանիքը,
Եվ ամենից վեր, ամենից լուսե՝
Մայր հայրենիքը:

Սուրեն Մուրադյան

Տուն և հայրենի տուն: Դու երբևէ մտածե՞լ ես այս երկուսի տարբերության մասին: Տունը կարող է կառուցվել ամեն տեղ, նույնիսկ օտար հողի վրա: Օրինակ՝ շատ հայեր իրենց շքեղ տները կառուցել և կառուցում են օտար հողի վրա: Այդ տները, թեկուզև հոյակապ են, բայց երբեք հայրենի տուն չեն կարող լինել: **Հայրենի տունը կառուցվում է միայն հայրենի հողի վրա՝ հայրենիքում:** Մեր հայրենիքը Հայաստանն է: Մենք այստեղ պետք է ապրենք, սովորենք, աշխատենք, կառուցենք:

Կարդա՛ բանաստեղծության այս հատվածը և փորձի՛ր պատասխանել, թե ինչու է բանաստեղծն այսպես կարծում:

Հողին վրա ուրիշին
Տունը, որ դուն շինեցիր,
Քար է միայն, հող ու կիր:

Հողին վրա ուրիշին
Ծառը, որ դուն տնկեցիր,
Չի տար կյանքի հովանին:

Մուշեղ Իշխան

Մեր հայրենիքը շատ հին է: Այն բազում լավ ու վատ օրեր է տեսել: Տեսել է պատերազմներ, թալան ու ավեր, բայց մեր պապերն այնքան քաջ ու աշխատասեր են եղել, որ կարողացել են այն պաշտպանել ու հասցնել մեզ:

Հայոց երկիրն իր անվանումը ստացել է մեր նախահայր Հայկի անունից: Երբ քաջ հսկա Հայկը իր աղեղով և երեքթևյան նետով սպանեց բռնակալ Բելին, դրանից հետո երկիրը նրա անունով կոչվեց Հայք, այսինքն՝ Հայաստան: Իսկ մենք բոլորս Հայկ Նահապետի սերունդներն ենք, և այս երկիրը բոլորիս հարազատ տունն է: Մենք այն ժառանգություն ենք ստացել մեր նախնիներից, որպեսզի մենք էլ մեր հերթին շենացնենք և փոխանցենք մեր որդիներին:

Հյուսիսային պողոտան Երևանում

Այսօր մենք ունենք մի փոքր, բայց անկախ պետություն, որը կոչվում է Հայաստանի Հանրապետություն: Այն կրճատ անվանում են նաև Հայաստան: Հայաստանի մայրաքաղաքը Երևանն է, որն աշխարհի հնագույն քաղաքներից է: Այն հիմնադրել է Արգիշտի Առաջինը Քրիստոսի ծննդից առաջ 782 թվականին: Երևանն անվանում են վարդագույն քաղաք, քանի որ շենքերն այստեղ հիմնականում կառուցված են վարդագույն տուֆից: Մեր մայրաքաղաքն այսօր էլ շատ գեղեցիկ է, կառուցվել են բազմաթիվ նոր շենքեր, փողոցներ, տեղադրվել են հուշարձաններ:

Հայաստանի խոշոր քաղաքներն են Գյումրին և Վանաձորը: Մեր երկրի տարածքը այժմ կազմում է մոտ 30 հազար քառակուսի կմ, իսկ բնակչությունը ավելի քան 3 միլիոն է:

Հայաստանի Հանրապետության հարևաններն են՝ Վրաստանը, Ադրբեջանը, Թուրքիան և Իրանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է հայրենի տունը: 2-3 նախադասությամբ փորձի՛ր ներկայացնել:
2. Ինչպե՞ս է առաջացել մեր երկրի անվանումը:
3. Այժմ ինչպե՞ս է կոչվում մեր երկիրը, և որո՞նք են մեզ հարևան պետությունները: Քարտեզի վրա ցո՛ւյց տուր Հայաստանի Հանրապետությունը և նրա հարևան պետությունները, նշի՛ր դրանց մայրաքաղաքները:
4. Ո՞րն է Հայաստանի մայրաքաղաքը, ո՞վ է այն հիմնադրել:

Ես արդեն գիտեմ...

Հայրենի տունը կառուցվում է միայն հայրենի հողի վրա՝ հայրենիքում: Հայոց երկիրն իր անվանումը ստացել է մեր նախահայր Հայկի անունից: Այսօր մենք ունենք մի փոքր, բայց անկախ պետություն, որը կոչվում է Հայաստանի Հանրապետություն:

Դաս 32 Հայաստանի Հանրապետության մարզերը և քաղաքները

Մեր հանրապետության կառավարության նստավայրը մայրաքաղաք Երևանն է: Այստեղ են կայացվում մեր երկրի համար ամենակարևոր որոշումները: Իսկ հիմա պատկերացնենք, թե ի՞նչ կկատարվեր, եթե հեռավոր կամ թեկուզև մայրաքաղաքին մոտ գտնվող ցանկացած մեծ ու փոքր բնակավայրի առօրյա հարցերով զբաղվեին միայն Երևանում: Իրենց հուզող ցանկացած խնդրի լուծման համար մարդիկ ստիպված պետք է երկար ճանապարհ հաղթահարեին Երևան հասնելու համար: Այդպիսի անհարմարություններից խուսափելու համար Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանված է վարչատարածքային միավորների՝ **մարզերի** (նկ. 40): **Դրանք 10-ն են** (տե՛ս աղյուսակը):

Աղյուսակ

Հայաստանի Հանրապետության մարզերը

Վարչական մարզեր	**Մարզային կենտրոնը**
1. Արագածոտնի	Աշտարակ
2. Արարատի	Արտաշատ
3. Արմավիրի	Արմավիր
4. Գեղարքունիքի	Գավառ
5. Լոռու	Վանաձոր
6. Կոտայքի	Հրազդան
7. Շիրակի	Գյումրի
8. Սյունիքի	Կապան
9. Վայոց Ձորի	Եղեգնաձոր
10. Տավուշի	Իջևան

ՀՀ վարչական քարտեզի վրա գտի՛ր ձեր մարզը և նրան հարևան մարզերը, պետությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
(վարչական քարտեզ)
Վ Ր Ա Ս Տ Ա Ն
Ա Դ Ր Բ Ե Ջ Ա Ն
Թ Ո Ւ Ր Ք Ի Ա
ՇԻՐԱԿ
Գյումրի
Ա. Ալեքսանդրով
Լ Ո Ռ Ի
Վանաձոր
Դարպասի ամրոց
Սանահնի վանք
Հաղբատի վանք
Ս. Աստվածածին
Սարատ լ.
4095մ
Դիլիջանի ազգային պարկ
Դիլիջան
Գոշավանք
Գոշ լ.
3724
Գոշավանքի ամրոց
Գոշ գետ
Գանձակ
Գյանջա
Գ Ա Ր Ի Ճ Ա Ն Ա Ծ
Գ Ա Ր Ա Ս Ա Ն
Ս Ե Վ Ա Ն Ա Լ Ի Մ
Ս Ա Ն Ա Հ Ի Ն
Ս Ա Ղ Ա Տ Ա Ս
Ս Ա Ռ Ն Ա Ղ
Ս Ա Ռ Ն Ա Ղ Ի Ա
Ս Ա Ռ Ն Ա Ղ Ի Ա
Ս Ա Ռ Ն Ա Ղ Ի Ա

քաղաքների զարգացման, բնակչության կյանքին առնչվող հարցերի և շատ այլ պետական խնդիրների լուծմամբ: Բացի այդ, յուրաքանչյուր բնակավայրի խնդիրների լուծմամբ զբաղվում են **տեղական ինքնակառավարման մարմինները**՝ քաղաքապետի կամ գյուղապետի գլխավորությամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքում կա ավելի քան 900 բնակավայր: Դրանցից 49-ը քաղաքներ են, մնացածը՝ գյուղեր: Քաղաքները միմյանցից տարբերվում են մի շարք հատկանիշներով՝ բնակչության թվով, տնտեսական գործունեությամբ և այլն:

Հայաստանի ամենախոշոր քաղաքը **Երևանն** է: Այստեղ են գտնվում մեր հանրապետության նախագահի նստավայրը, կառավարության շենքը, Ազգային ժողովը, բոլոր նախարարությունները: Երևանում կան բազմաթիվ գործարաններ, մշակութային օջախներ, թանգարաններ, համալսարաններ, ժամանակակից հյուրանոցներ և այլն:

Հանրապետության երկրորդ խոշոր քաղաքը Շիրակի մարզկենտրոն **Գյումրին** է: 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից հետո այն վերականգնվում է:

Վայոց Ձորի մարզում է գտնվում առողջարանային քաղաք **Ջերմուկը**, որը հայտնի է իր բուժիչ հանքային ջրերով:

Վերականգնվող Գյումրի

Երևանի շուրջը ձևավորվել են մի շարք փոքր և միջին մեծության քաղաքներ, որոնք բազմաթիվ արտադրական, մշակութային և այլ կապերով կապված են մայրաքաղաքի հետ: Դրանցից են **Աբովյանը, Բյուրեղավանը, Մասիսը, Վաղարշապատը** և այլն: Մեր հանրապետության քաղաքները անընդհատ զարգանում են, բարեկարգվում, հարստանում ժամանակակից շինություններով, ձեռնարկություններով:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Թվարկի՛ր և քարտեզի վրա ցո՛ւյց տուր Հայաստանի Հանրապետության մարզերը և մարզկենտրոնները:**

2. **Ինչո՞ւ է մեր հանրապետության տարածքը բաժանվել մարզերի: Ովքե՞ր են զբաղվում քաղաքների և գյուղերի տարբեր խնդիրների լուծմամբ:**
3. **Կազմի՛ր քո բնակավայրին մոտ գտնվող քաղաքների և գյուղերի ցուցակը:**
4. **Քարտեզի վրա գտի՛ր և տետրում նշի՛ր ՀՀ տարբեր մարզերի առնվազն 10 քաղաքային բնակավայրերի անուններ:**

Ես արդեն գիտեմ...

Մարդկանց կյանքը ճիշտ կազմակերպելու, տեղական նշանակության խնդիրները լուծելու համար Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանված է 10 մարզերի, քաղաքային և գյուղական համայնքների:

Դաս 33 Մեր պետականության խորհրդանիշները

Աշխարհի բոլոր պետություններն ունեն իրենց խորհրդանիշները: Իսկ ի՞նչ են դրանք: **Բոլոր երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներն են՝ զինանշանը, դրոշը և օրհներգը:**

ՀՀ զինանշանը

Զինանշանը: Զինանշանը առանձնահատուկ պատկեր-նշան է, որ կարող են ունենալ տոհմերը, իշխանությունները, քաղաքները, պետությունները: Այն փոխանցվում է սերնդեսերունդ: Շատ պետությունների զինանշաններ ստեղծվել են վաղուց և ունեն հին պատմություն: Հայաստանի Հանրապետության զինանշանը նույնպես ստեղծվել է շատ տարիներ առաջ՝ 1918 թվականին: Այն շատ գեղեցիկ է: Ուշադի՛ր նայիր. կտեսնես, որ այնտեղ պատկերված են արծիվ և առյուծ, որոնք բռնած պահում են մի վահան: Վահանի վրա պատկերված

են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի չորս թագավորությունների (Արտաշեսյանների, Արշակունիների, Բագրատունիների և Ռուբինյանների) զինանշանները: Վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն:

Մեր զինանշանում պատկերված առյուծը համարվում է փառքի, իսկ արծիվը՝ հզորության խորհրդանիշ: **Իսկ ինչ են խորհրդանշում մյուս պատկերները:**

Դրոշը: Դու անշուշտ նկատել ես, որ մեր քաղաքներն ու գյուղերը հաճախ զարդարվում են եռագույն դրոշներով: Այդ դրոշները հատկապես շատ են լինում տոնական օրերին, իսկ պետական և կառավարական շենքերի ճակատներին դրանք մշտապես ծածանվում են: Դա մեր երկրի՝ Հայաստանի Հանրապետության պետական դրոշն է, որն ունի երեք գույն՝ կարմիր, կապույտ, նարնջագույն:

Արյունից ծորած երիզ մի բոսոր,
Երկնքից պոկված կապույտ մի կտոր,
Հասուն հասկերի շող նարնջագույն
Եվ վեց դարերի խավարի վրա՝
Դրոշ եռագույն...

ՀՀ պետական դրոշը

Մեր դրոշի գույները խորհրդանշում են հայ ժողովրդի անցած ուղին, նրա ներկան և ապագան:

Օրհներգը: Մեր ժամանակներում օրհներգը երկրի պետականության խորհրդանիշներից մեկն է: Հունարեն այս բառը հնչում է որպես **հիմն:** Հին հույները հիմներ կամ հանդիսավոր փառաբանական երգեր էին հյուսում իրենց աստվածների կամ հերոսների պատվին: «Հիմն» բառը հունարենից անցել է աշխարհի շատ լեզուների: Մենք՝ հայերս, այն կոչում ենք **օրհներգ**: Դա հանդիսավոր երաժշտական ստեղծագործություն է, որը հնչում է կարևոր իրադարձությունների ժամանակ: Օրինակ՝ օրհներգը հնչում է, երբ պետության ղեկավարը հյուրեր է ընդունում կամ, երբ մարզիկները ոսկե մեդալներ են նվաճում մրցումների ժամանակ: Օրինակ՝ 2008 թվականին Դրեզդենում կայացած շախմատի օլիմպիադայի ժամանակ հանդիսավոր հնչեց մեր երկրի օրհներգը, քանի որ Հայաստանի հավաքականը կրկին դարձավ օլիմպիական չեմպիոն:

Հայաստանի Հանրապետության օրհներգը գրել են բանաստեղծ Միքայել Նալբանդյանը և երգահան Բարսեղ Կանաչյանը: Հանդիսավոր միջոցառումների ժամանակ, երբ հնչում է երկրի օրհներգը, բոլորը պետք է ոտքի կանգնեն, տղամարդիկ պետք է հանեն գլխարկները, իսկ զինվորականները՝ պատվի առնեն:

Մեզանից յուրաքանչյուրը պետք է անգիր իմանա մեր օրհներգը:

Մեր Հայրենիք, ազատ, անկախ,
Որ ապրել է դարեդար,
Յուր որդիքը արդ կանչում են
Ազատ, անկախ Հայաստան:

Ահա՛, եղբայր, քեզ մի դրոշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղա,
Արտասուքով լվացի:

Նայիր նրան՝ երեք գույնով,
Նվիրական մեր նշան,
Թող փողփողի թշնամու դեմ,
Թող միշտ պանծա Հայաստան:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց, երանի՝ որ յուր ազգի
Ազատության կզոհվի:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Որո՞նք են Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները:**
2. **Ի՞նչ է պատկերված մեր զինանշանի վրա:**
3. **Որո՞նք են Հայաստանի Հանրապետության դրոշի գույները, և ի՞նչ են դրանք խորհրդանշում:**
4. **Ե՞րբ է հնչում պետության օրհներգը:**

Ես արդեն գիտեմ ....

Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներն են՝ զինանշանը, դրոշը և օրհներգը: Հայաստանի Հանրապետության զինանշանի վրա պատկերված են արծիվ և առյուծ, որոնք բռնած պահում են մի վահան:

Հայաստանի Հանրապետության պետական դրոշը ունի երեք գույն՝ կարմիր, կապույտ, նարնջագույն: Մեզանից յուրաքանչյուրը պետք է անգիր իմանա մեր օրհներգը:

Դաս 34 Մեր ազգային-պետական տոները

Դու արդեն գիտես, որ բոլոր մարդկանց կյանքում լինում են տոնական օրեր: Օրինակ՝ յուրաքանչյուր մարդու կյանքում ամենահիշարժան օրն իր ծննդյան օրն է: Այդ օրը մեզանից յուրաքանչյուրը տոնում է իր ընտանիքի անդամների, մտերիմների, բարեկամների հետ: Բայց կան օրեր, որոնք տոնական են բոլորի համար. դրանք տոնում է ողջ ժողովուրդը: Այդպիսի տոները կոչվում են ազգային-պետական: Դրանք մեր պետության և ժողովրդի համար այնպիսի կարևոր իրադարձություններ են, որոնց մասին պետք է միշտ հիշել: Այդ պատճառով էլ մարդիկ ամեն տարի տոնում են այդ օրը: Տոնում ենք նաև եկեղեցական տոները: Օրինակ՝ Սուրբ ծնունդը, Սուրբ հարությունը (Զատիկ) և այլն: Եթե թերթես օրացույցը, անմիջապես կնկատես տոնական օրերը, որովհետև դրանք ներկված են կարմիր գույնով:

Ուշադի՛ր կարդա օրացույցի այս թերթիկը և փորձի՛ր մտապահել.

Հունվարի 1 – Ամանոր
Հունվարի 6 – Սուրբ Ծնունդ և Հայտնություն
Հունվարի 28 – Բանակի օր
Մարտի 8 – Կանանց տոն
Մայիսի 9 – Հաղթանակի և խաղաղության տոն
Մայիսի 28 – Հանրապետության տոն
Հուլիսի 5 – Սահմանադրության օր
Սեպտեմբերի 21 – Անկախության տոն

Կան տոներ, որոնց մենք սպասում ենք ամբողջ տարին և նշում ենք մեծ սիրով: Այդպիսին են Նոր տարին կամ Ամանորը և Սուրբ ծնունդը, որոնք շատերիս համար տարվա ամենագեղեցիկ տոներն են: Տարեմուտի օրերին բոլոր ընտանիքներում մեծ ուրախություն է տիրում: Գույնզգույն խաղալիքներով զարդարվում է կանաչ եղևնին, որը **Ամանորի** խորհրդանիշն է: Եղևնու կատարին շողշողում է աստղը, այն աստղը, որը ցույց տվեց Բեթղեհեմ քաղաքում Հիսուս Քրիստոսի ծնված տեղը: Իսկ այն օրը, երբ ծնվեց Հիսուսը, կոչում ենք **Սուրբ Ծնունդ և Հայտնություն**, ու աշխարհի բոլոր քրիստոնյաները տոնում են այն: Տարեմուտի գիշերը բոլոր երեխաների ամենասիրելի պահն է, որովհետև այդ ժամանակ խորհրդավոր կերպով, աննկատ հայտնվում է մի նվիրատու, որին անվանում են Ձմեռ պապ: Նա ձմռան մթին այցելում է բոլոր երեխաներին և բերում է նվերներ:

Այս ձմեռվա պաղ համբույրով,
Այս եղևնու անուշ բույրով,
Հազար ու մի հրապույրով
Եկավ Նոր տարին:

Էլ ի՞նչ հիշարժան տոներ կան մեր օրացույցում:

Նոր տարին դիմավորելուց հետո՝ հունվարի 6-ին, մենք՝ հայերս, տոնում ենք Սուրբ Ծնունդը և Հայտնությունը:

Այս տանկը մասնակցել է Շուշիի ազատագրմանը:

Սեպտեմբերի 21-ին հայ ժողովուրդը նշում է **Անկախության տոնը:** Տարիներ առաջ՝ 1991 թվականի այդ օրը, մեր երկրի քաղաքացիները «այո» ասացին մեր անկախությանը: Եվ այդ իրադարձությունը կարող ենք համարել մեր նորանկախ պետության ծննդյան յուրահատուկ օրը:

Մայիսի 9-ը **Հաղթանակի և խաղաղության տոնն է:** Այդ օրը մենք նշում ենք նաև Շուշիի ազատագրումը:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ են անհրաժեշտ ազգային-պետական տոները:**
2. **Ի՞նչ տոներ գիտես,**
   - **որոնք նշվում են քո ընտանիքում,**
   - **որոնք նշում է ողջ ժողովուրդը:**
3. **Ինչպիսի՞ տոն է քեզ համար Նոր տարին, ինչո՞ւ:**
4. **Թվարկի՛ր այն տոները, որոնք նշում եք դասարանով:**

Ես արդեն գիրքեմ ...

Բոլոր մարդկանց կյանքում լինում են տոնական օրեր: Կան օրեր, որոնք տոնական են բոլորի համար. դրանք կոչվում են ազգային-պետական տոներ: Տոնական օրերը օրացույցում ներկված են կարմիր գույնով:

Նավասարդ

Հին հայերը Նոր տարին կոչում էին Նավասարդ և դիմավորում էին օգոստոսին: Ըստ ժողովրդական հին ասացվածքի՝ Նոր տարին ինչպես դիմավորես, այնպես էլ կանցկացնես ողջ տարին:

Ասում են նաև, որ Նոր տարվա գիշերը պետք է դիմավորել տանը, ընտանիքի հետ՝ լի ու առատ սեղանի շուրջ: Այդ դեպքում ողջ տարին առատ կլինի:

Տոնածառ

Ծննդյան տոներին տանը զարդարված եղևնի դնելու սովորույթը գալիս է Գերմանիայից: Այս մասին առաջին գրավոր հիշատակությունները վերաբերում են 17-րդ դարի սկզբին: Գերմանական ավանդությունը այս սովորույթը վերագրել է Մարտին Լյութերին, որը ձմռան մի գիշեր անտառով քայլելիս տեսնում է եղևնիների ճյուղերի արանքից վառ փայլող աստղերը: Այդ տեսարանը հիացնում է Լյութերին, և նա որոշում է Ծննդյան տոնին մոմերով զարդարված մի ծառ դնել իր տանը: Այսպես առաջացավ տոնածառը:

Դաս 35 Մեր հայրենիքի անցյալը և ներկան: Տարիների հաշվումը պատմության մեջ

Երբևէ եղե՞լ ես Մատենադարանում կամ Հայաստանի պատմության թանգարանում: Եթե այո, ապա այնտեղ դու տեսել ես հին ձեռագրեր, նկարներ, իրեր: Այդ ամենը մեզ պատմում է մեզանից շատ առաջ ապրած մարդկանց, անցյալում տեղի ունեցած իրադարձությունների, ստեղծված արժեքների մասին: Այդ ամենը մեր պատմությունն է: Պատմությունն անվանում են ժողովրդի հիշողություն: Այդ հիշողության շնորհիվ մենք այսօր գիտենք, թե ինչպես են ապրել մեր նախնիները, ինչով ենք մենք նրանց նման կամ ինչով ենք տարբերվում: Գիտենք նաև, թե ինչ են ստեղծել, արարել կամ, ցավոք, կորուստներ ունեցել մեր նախնիները, ինչպես են պաշտպանել մեր հայրենիքը: Այդ ամենի մասին մեզ պատմում են մեր պատմիչների թողած ձեռագրերը, հին նկարները, տարբեր զրույցները, առասպելները, ավանդությունները, պահպանված իրերը՝ զարդերը, զենքերը, դրամները, տարբեր շինությունները:

Պատմությունն օգնում է, որպեսզի սխալներ թույլ չտանք այսօր և ճիշտ կառուցենք մեր ապագան: Դրա համար բոլորս պետք է լավ իմանանք մեր պատմությունը և սրբորեն պահպանենք մեզ ժառանգություն հասած արժեքները:

Հայ ժողովրդի համար պատմական մեծ արժեք ունի Պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գիրքը: Այն ներկայացնում է մեր ազգի պատմությունը՝ անհիշելի ժամանակներից մինչև իր ապրած ժամանակը՝ 5-րդ դարը: Իսկ ի՞նչ է դարը: Երբ մենք խոսում ենք որևէ իրադարձության մասին, որը տեղի է ունեցել ոչ շատ հեռավոր անցյալում, ապա նշում ենք այդ իրադարձության տարեթիվը, օրինակ, մենք ասում ենք. «Հայ մեծ գրող Հովհաննես Թումանյանը ծնվել է 1869 թվականին» կամ «Մարդն առաջին անգամ տիեզերք թռավ 1961 թվականի ապրիլի 12-ին»: Մեզանից հարյուրավոր կամ հազարավոր տարիներ առաջ տեղի ունեցած իրադարձությունների համար մենք ավելի հաճախ օգտագործում ենք դար և հազարամյակ բառերը: Մեկ դարը հարյուր տարին է: Հազարամյակը հազար տարին է կամ տասը դարը:

Ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ մեր երկրում ընդունված է տարիների հաշվումը սկսել **Հիսուս Քրիստոսի**

ծննդից: Ըստ այդ հաշվարկի՝ այն բոլոր իրադարձությունները, որոնք կատարվել են նախքան Քրիստոսի ծնունդը, համարում ենք **Քրիստոսի ծննդից առաջ** տեղի ունեցած: Իսկ այն ամենը, ինչ եղել է դրանից հետո, համարում ենք **Քրիստոսի ծննդից հետո** տեղի ունեցած: Երբեմն գրքերում դու կարող ես հանդիպել **մեր թվարկությունից առաջ (մ.թ.ա.)** կամ **մեր թվարկություն (մ.թ.)** ձևերը (նկ. 41): Օրինակ՝ հայոց արքա Տիգրան Մեծը գահ է բարձրացել Քրիստոսի ծննդից առաջ 95 թվականին, ինչը կրճատ նշվում է Ք.ա. 95թ.: Իսկ Քրիստոսի ծննդից հետո տեղի ունեցած իրադարձությունների մասին խոսելիս հատուկ նշում չի կատարվում, այլ պարզապես գրվում է տարեթիվը: Օրինակ՝ 405 թվականին Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը:

տարիներ	1-100	101-200	201-300	301-400	401-500
դարեր	I	II	III	IV	V
տարիներ	501-600	601-700	701-800	801-900	901-1000
դարեր	VI	VII	VIII	IX	X
տարիներ	1001-1100	1101-1200	1201-1300	1301-1400	1401-1500
դարեր	XI	XII	XIII	XIV	XV
տարիներ	1501-1600	1601-1700	1701-1800	1801-1900	1901-2000
դարեր	XVI	XVII	XVIII	XIX	XX
տարիներ	2001-2100				
դարեր	XXI				



Նկ. 41 Ժամանակի ժապավեն

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է պատմությունը, և ինչո՞ւ է անհրաժեշտ այն լավ իմանալ:
2. Ի՞նչ է դարը:
3. Ինչպե՞ս է ընդունված կատարել տարիների հաշվումը:

4. **Ուշադի՛ր դիտիր ժամանակի ժապավենը և ասա, թե՝**
   - **ո՞ր դարերում են տեղի ունեցել հետևյալ իրադարձությունները՝ Ավարայրի ճակատամարտը – 451 թվական, քրիստոնեության ընդունումը – 301 թվական,**
   - **ո՞ր թվականին են տեղի ունեցել հետևյալ իրադարձությունները՝ հայոց գրերի գյուտ – 5-րդ դար, քո ծնունդը (նշի՛ր տարեթիվը և դարը):**

Ես արդեն գիտեմ ...

Պատմության շնորհիվ մենք այսօր գիտենք, թե ինչպես են ապրել մեր նախնիները, ինչով ենք մենք նրանց նման կամ ինչով ենք տարբերվում: Մենք բոլորս պետք է լավ իմանանք մեր պատմությունը և սրբորեն պահպանենք մեզ ժառանգություն հասած արժեքները: Մեզանից հարյուրավոր կամ հազարավոր տարիներ առաջ տեղի ունեցած իրադարձությունների համար մենք օգտագործում ենք դար և հազարամյակ բառերը: Մեր երկրում ընդունված է տարիների հաշվումը սկսել Հիսուս Քրիստոսի ծննդից:

Դաս 36 Նշանավոր գործիչներ և իրադարձություններ

Ո՛չ թե հողով և հացով,
Այլ քարերով ես հարուստ,
Քարին քնար քանդակող
Հանճարներով ես հարուստ:
Համո Սահյան

Հայ անվանի բանաստեղծ Համո Սահյանը մեծ հպարտությամբ է խոսում մեր ժողովրդի հանճարեղ զավակների մասին: Հայ ժողովուրդն իսկապես շատ է ունեցել նշանավոր, մեծանուն դեմքեր, որոնք իրենց ներդրումն են ունեցել տարբեր բնագավառներում: Նրանցից յուրաքանչյուրն անսահման սիրել է իր

հայրենիքը: Այդ մեծ սերն իր արտահայտությունն է գտել նրանց բոլոր գործերում:

Հովհաննես Թումանյանը մեր ազգային մեծ բանաստեղծն է: Նա գրել է և՛ մեծերի, և՛ փոքրերի համար: Թումանյանի հեքիաթները մեզանից յուրաքանչյուրին ուղեկցում են վաղ մանկությունից: Մենք մեծանում ենք, իսկ Թումանյանը նորից մեզ հետ է: Հայ ժողովուրդը շատ նշանավոր բանաստեղծներ և գրողներ է ունեցել, սակայն Թումանյանն է, որ արժանացել է «Ամենայն հայոց բանաստեղծ» կոչմանը: Թումանյանը իր ժողովրդի կողքին է եղել նրա համար ամենածանր պահերին: Օրինակ՝ այդպես էր 1915 թվականին, երբ Մեծ Եղեռնից մի կերպ փրկված հայ գաղթականները հավաքվել էին Էջմիածնի մայր տաճարի բակում, նրանց հետ էր մեծ բանաստեղծը:

Սասունցի Դավթի արձանը

Քեզ ծանո՞թ է այս արձանը: Գիտե՞ս՝ ով է այն քանդակել: Մեր քաղաքի հրապարակներից մեկը զարդարող այս հրաշալի արձանի հեղինակը **Երվանդ Քոչարն** է: Հայ անվանի քանդակագործը այնպես է կերտել Սասունցի Դավթին, որ նա ասես թռչում է՝ հարվածի պատրաստ թուրը ձեռքին: Դավթի ձին հրեղեն է, թվում է, թե նա ուր որ է կպոկվի իր պատվանդանից՝ ժայռից: Ձիու սմբակների մոտ դրված բրոնզե գավաթից ջուրը թափվում է և լցվում ավազանը: Տաղանդավոր քանդակագործը դրանով ցանկացել է ցույց տալ, որ ժողովրդի համբերության բաժակը լցվել է, և իր ազատության համար նա պատրաստ է պայքարել մինչև վերջ:

Հ. Կոջոյան. «Սասունցի Դավիթ»

Սասունցի Դավթին է պատկերել նաև հայ անվանի նկարիչ **Հակոբ Կոջոյանը:** Նա ստեղծել է «Սասունցի Դավիթ» էպոսի նկարազարդումների մի ամբողջ շարք:

Կոջոյանը այնպես է պատկերել մեր ամենասիրելի հերոսին, որ նրա մեջ երևում են հայ ժողովրդին բնորոշ հատկանիշները՝ հայրենասիրությունը, ազատասիրությունն ու արդարամտությունը: Սասունցի Դավթի հերոսական հատկանիշները փոխանցվել են հայ ժողովրդի շատ զավակների:

Հովհաննես Բաղրամյան

Այս նկարում պատկերված է հայ ժողովրդի նշանավոր զավակներից մեկը՝ **Հովհաննես Բաղրամյանը**: Նա հայ զորավար է, որը կռվել է 1918 թվականին Սարդարապատում, հետագայում՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, ղեկավարել է զորամասեր, ապա դարձել ռազմաճակատի հրամանատար: Այդ ռազմաճակատում կռվում էին ոչ միայն հայեր, այլև ռուսներ, ուկրաինացիներ և այլ ազգերի ներկայացուցիչներ: Նա արժանացել է զինվորական ամենաբարձր կոչումներից մեկին՝ մարշալի կոչմանը:



Մոնթե Մելքոնյան

Իսկ այստեղ պատկերված է մեր ժամանակի հերոսներից՝ **ազգային հերոս Մոնթե Մելքոնյանը**: Նա ապրել է արտասահմանում, սովորել է Բերկլիի, Կալիֆոռնիայի և Անգլիայի Օքսֆորդի համալսարաններում: Սակայն, երբ հայրենիքը վտանգի մեջ հայտնվեց, նա առաջիններից մեկն էր, որ առանց վարանելու զենք վերցրեց և կռվեց իր հայրենիքի համար: Մոնթե Մելքոնյանը հերոսի մահով զոհվեց Արցախի ազատության համար: Այդպիսի հերոսների շնորհիվ է, որ այսօր Արցախը ապրում է խաղաղ, իսկ արցախցին իր հողի տերն է:

Վիկտոր Համբարձումյանը մեծ գիտնական է: Նրա անունը հայտնի է ամբողջ աշխարհում: Նա զբաղվել է աստղագիտությամբ: Երկար տարիներ ղեկավարել է իր հիմնադրած Բյուրականի աստղադիտարանը և Հայաս-

Վիկտոր Համբարձումյան

Բյուրականի աստղադիտարանը

տանի գիտությունների ակադեմիան: Վ. Համբարձումյանը այնքան մեծ հեղինակություն է ունեցել, որ ընտրվել է Գիտնականների միջազգային միության նախագահ:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Հ. Թումանյանի ո՞ր ստեղծագործություններն ես կարդացել:**
2. **Հայ ժողովրդի ո՞ր հատկանիշներն է խորհրդանշում Սասունցի Դավիթը:**
3. **Հայ ժողովրդի ուրիշ ի՞նչ հերոսներ և նշանավոր գործիչներ գիտես: Քո կարծիքով՝ ինչո՞ւ են նրանք նշանավոր:**
4. **Քո կարծիքով՝ ո՞վ կարող է կոչվել հերոս: Խաղաղ ժամանակ կարելի՞ է հերոսանալ:**

Ես արդեն գիտեմ ...

Հայ ժողովուրդն ունեցել է և ունի շատ նշանավոր, մեծանուն դեմքեր: Նրանցից յուրաքանչյուրն անսահման սիրել է իր հայրենիքը: Մեր ժողովուրդը շատ նշանավոր գործիչներ է ունեցել: Նրանցից են Հովհաննես Թումանյանը, Հակոբ Կոջոյանը, Հովհաննես Բաղրամյանը, Մոնթե Մելքոնյանը և շատ ուրիշներ:

Դաս 37 Մշակութային արժեքներ

Հայ ժողովուրդն ունի շատ հին և հարուստ մշակույթ: Երբ ասում ենք **մշակույթ**, առաջին հերթին հասկանում ենք այն ամենը, ինչ երկար դարերի ընթացքում ստեղծել է ժողովուրդը: Օրինակ՝ եկեղեցիները, խաչքարերը, հուշարձանները, մագաղաթյա ձեռագրերը, ամրոցները, կամուրջները և այլն: Մշակութային արժեքներ ստեղծվում են նաև այսօր՝ մեր օրերում: Դրանք, օրինակ, շատ գեղեցիկ գորգերն են, ոսկե կամ արծաթե իրերը, հուշարձանները և այլն:

Հազար կողմից սրով խոցված,
Հազար կողմից ստացած վերք,
Հազար անգամ գերի տարված,
Ցրիվ եկած աշխարհով մեկ՝
Մագաղաթներ՝ սուրբ, խնկաբույր,
Բյուր դարերի փոշով օծված,
Դուք մեր նախնյաց ոգին եք հուր՝
Իմաստությամբ, խոհով լցված:
Սուրեն Մուրադյան

Մատենադարանի շենքը

Մագաղաթյա ձեռագրեր: Երևանի կենտրոնում՝ բարձրադիր սարալանջի վրա, վեր է խոյանում մի գեղեցիկ շենք: Դա Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի շենքն է: Այստեղ պահպանվում են ձեռագիր մատյաններ:

Մեր ժողովուրդը դրանք ստեղծել է երկար դարերի ընթացքում, պահել, պահպանել ու մեզ է հասցրել: Մատենադարանում կարելի է տեսնել շատ մեծ և փոքրիկ ձեռագրեր: Կա, օրինակ, մի շատ փոքր ձեռագիր մատյան, որը կոչվում է «Տոնացույց»: Այն բաղկացած է 103 էջից և ունի ձեռքի ափի մեծություն:Այս ձեռագիրը հայտնի է նաև «Թզուկ» անունով: Ձեռագրերը հին գրքեր են, որոնք գրված են ձեռքով, մագաղաթի վրա և ունեն շատ գեղեցիկ նկարազարդումներ: Այդպիսի նկարազարդումն անվանում են **մանրանկարչություն**: Մանրանկար բառն արդեն հուշում է, որ այդ նկարները փոքր չափեր ունեն: Դրանք շատ տարածված են եղել Հայաստանում: Հայ մանրանկարիչների գործերն այսօր էլ զարմացնում ու հիացնում են իրենց բարձրաճաշակ արվեստով, ինքնատիպ զարդանախշերով, պայծառ գույներով: Մանրանկարիչներից շատերի անունները չեն պահպանվել: Մեզ են հասել Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի, Մոմիկի և ուրիշների անունները: Նրանք տաղանդավոր ման-

ռանկարիչներ են, որոնց գործերը զարդարում են նաև մեր ձեռագիր մատյանները:

Կանգնել է նա դարերի դեմ՝
Որպես խաչված գեղեցկություն...
Վահագն Դավթյան

Խաչքար: Խաչքարը հայկական կոթող-հուշարձան է: Մեզ հայտնի ամենահին խաչքարերը 9–10-րդ դարերում են ստեղծվել: Խաչքարերը ստեղծվել են ամենատարբեր առիթներով՝ ռազմական հաղթանակների, եկեղեցիների, կամուրջների և այլ շինությունների ավարտը, պատմական կարևոր դեպքերը հիշատակելու համար և այլն: Մեր ժողովրդի համար խաչքարը ծառայել է նաև որպես հուշաքար՝ հանգուցյալների հիշատակը վառ պահելու համար:

Գեղարդի ժայռափոր խաչքարերը

Խաչքարերը շատ գեղեցիկ են. դրանք սովորաբար ունեն ուղղաձիգ սալաքարի ձև, վրան պատկերված է խաչ և տարբեր զարդաքանդակներ: Այդ զարդաքանդակները երբեմն այնպիսի նրբությամբ են կատարված, որ քարի վրա քանդակած զարդը ասես ասեղնագործ աշխատանք լինի: Երբեմն էլ դրանք նման են ոսկերչական գործերի: Այդպիսի բացառիկ արժեքավոր խաչքարեր են Մոմիկ վարպետի խաչքարը՝ Նորավանքում, «Սիրուն խաչը»՝ Դսեղում, Գեղարդի ժայռափոր խաչքարերը և այլն:

Մեր օրերում նույնպես հայ վարպետները, շարունակելով ավանդույթները, կերտում են շատ գեղեցիկ խաչքարեր:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչ ես հասկանում մշակույթ ասելով: Թվարկիր մի քանի մշակութային արժեքներ:**
2. **Ինչո՞վ է հայտնի Մատենադարանը:**
3. **Երբևէ խաչքար տեսել ես: Նկարագրիր այն:**
4. **Ինչ է մանրանկարը:**

Եվ արդեն գիրքեմ...

Մշակութային արժեքներ են եկեղեցիները, խաչքարերը, հուշարձանները, մագաղաթյա ձեռագրերը և այլն: Մշակութային արժեքներ ստեղծվում են նաև այսօր՝ մեր օրերում: Մեր ձեռագիր մատյանները զարդարում են մանրանկարները: Խաչքարը հայկական կոթող-հուշարձան է:

Դաս 38 Մարզական նվաճումներ

Մարդկությունը դեռևս հնագույն ժամանակներից մեծ տեղ է հատկացրել սպորտին: Տարբեր ժամանակներում կազմակերպվել են մարզական տարբեր մրցություններ, խաղեր: Ք.ա 776թ. Հին Հունաստանում կազմակերպվեցին աշխարհում առաջին օլիմպիական խաղերը: Դրանք իսկական տոնախմբության էին նման. կազմակերպվում էին ձիակառքով արշավների, վազքի, հնգամարտի, բռնցքամարտի մրցություններ: Խաղերը տևում էին մոտ հինգ օր և նվիրվում էին հին հույների գլխավոր աստծուն՝ Զևսին: Հետագայում օլիմպիական խաղերը սկսեցին կազմակերպել չորս տարին մեկ: Մեր օրերում անցկացվող օլիմպիական խաղերը Հին Հունաստանի խաղերի շարունակությունն են:



Ազարյանական խաչ

Հին Հայաստանում նույնպես կազմակերպվում էին տարբեր մարզաձևերի մրցույթներ, որոնք կոչվում էին **Նավասարդյան խաղեր:**

Հայ մարզիկները միշտ էլ մասնակցել և մրցանակներ են շահել ոչ միայն օլիմպիական, այլև շատ այլ մարզական մրցույթների ժամանակ: Հայտնի է, որ օլիմպիական խաղերին մասնակցել և մրցանակներ են շահել դեռևս հայոց Տրդատ Մեծ և Վարազդատ թագավորները: Նոր ժամանակներում ևս մեր ժողովուրդն ունի մարզիկներ, որոնցով նա հպարտանում է: Այդպիսի անուններ են՝ Տիգրան Պետրոսյանը, Ալբերտ Ազարյանը, Յուրի Վարդանյանը, Շավարշ Կարապետյանը և շատ ուրիշներ:

Ալբերտ Ազարյան: Ա. Ազարյանը հռչակավոր հայ մարմնամարզիկ է: Նրա անունով Երևանում գործում է մարմնամար-

զության հատուկ դպրոց: Ա. Ազարյանը օլիմպիական խաղերի եռակի և աշխարհի ու Եվրոպայի բազմակի չեմպիոն է: Նրան անվանում են «Օղակների արքա», իսկ այն վարժությունը, որ նա կատարում էր օղակների վրա, պաշտոնապես անվանել են «Ազարյանական խաչ»:

Յուրի Վարդանյանը համաշխարհային հռչակ ունեցող ծանրամարտիկ է: Նա 1980թ. Մոսկվայի օլիմպիական խաղերի չեմպիոն է: Իսկ աշխարհի առաջնություններում հաղթել է 7 անգամ: Յուրի Վարդանյանը սահմանել է համաշխարհային 43 ռեկորդ: Իսկ Գինեսի ռեկորդների գրքում նրա անունը գրանցվել է, քանի որ մեկ օրում հայ մարզիկը սահմանել է 5 ռեկորդ:



Յու. Վարդանյան

Շավարշ Կարապետյան: Այս նշանավոր մարզիկի մասին գրվել են բազմաթիվ գրքեր, նկարահանվել են ֆիլմեր: Իսկ 1984 թվականին տիեզերքում մի մոլորակ նույնիսկ անվանակոչվեց «Շավարշ»՝ ի պատիվ հայ մարզիկի: Շավարշ Կարապետյանը ստորջրյա արագընթաց լողորդ է, Եվրոպայի չեմպիոն և 11 ռեկորդների հեղինակ: Նա հայտնի է նաև որպես հերոս: Տարիներ առաջ Երևանում տեղի ունեցավ ողբերգական մի պատահար. ուղևորներով լի տրոլեյբուսը գլորվեց Երևանյան լիճը: Անվանի մարզիկը, որն այդ պահին մարզվում էր այնտեղ, մեծ հերոսություն և անձնազոհություն ցուցաբերելով, փրկեց տասնյակ մարդկանց կյանքեր:



Շ. Կարապետյան

Տիգրան Պետրոսյանը հանճարեղ հայ շախմատիստ է, գիտնական, փիլիսոփա: Նա աշխարհի կրկնակի չեմպիոն է: Իր փայլուն հաղթանակների և կայուն խաղի համար նրան անվանում են «Երկաթյա Տիգրան»: Ընդհանրապես, շախմատը Հայաստանում շատ սիրված խաղ է: Հին



Տ. Պետրոսյան

հայերը շախմատն անվանում էին ճատրակ: Մեր պատմիչների վկայությամբ այս խաղը շատ են սիրել հայ արքաները:

Լ. Արոնյան

Լևոն Արոնյան: Մեր օրերում էլ շարունակվում են շախմատային ավանդույթները: Տիգրան Պետրոսյանի փառքը շարունակում են հայ երիտասարդ շախմատիստները: Նրանցից մեկը **Լևոն Արոնյանն** է: Նա ծնվել է 1982 թվականին Երևանում: Չնայած իր երիտասարդ տարիքին՝ արդեն հասցրել է դառնալ ՀՀ չեմպիոն, աշխարհի գավաթակիր, Շախմատի համաշխարհային օլիմպիադայի կրկնակի չեմպիոն, Եվրոպայի թիմային առաջնության հաղթող: Նա համարվում է աշխարհի ուժեղագույն շախմատիստներից մեկը:

Շախմատի օլիմպիական (2008թ.) և աշխարհի (2011թ) չեմպիոն Հայաստանի «Ոսկե հավաքականը»

2008 թվականին Դրեզդենում կայացած շախմատային օլիմպիադայում մեր «Ոսկե հավաքականը» պահպանեց չեմպիոնի իր տիտղոսը և կրկին դարձավ օլիմպիական չեմպիոն: 2011թ. մեր հավաքականը Չինաստանի Նինբո քաղաքում դարձավ աշխարհի չեմպիոն: Աշխարհի շատ քիչ երկրներ են, որ կարողացել են հասնել այդպիսի մեծ հաջողության:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Որտեղ և ինչպես էին կազմակերպվում առաջին օլիմպիական խաղերը:**
2. **Օլիմպիական ո՞ր մարզաձևն է քեզ ամենաշատը դուր գալիս: Համառոտ պատմի՛ր այդ մասին:**
3. **Ուրիշ ի՞նչ անվանի հայ մարզիկներ գիտես:**
4. **Ի՞նչ մարզաձևով ես զբաղվում կամ կցանկանայիր զբաղվել:**

Ես արդեն գիտեմ...

Դեռևս Ք.ա 776թ. Հին Հունաստանում կազմակերպվեցին աշխարհում առաջին օլիմպիական խաղերը: Հայտնի է, որ օլիմպիական խաղերին մասնակցել և մրցանակներ են շահել հայոց Տրդատ Մեծ և Վարազդատ թագավորները: Նոր ժամանակներում ևս ունենք օլիմպիական չեմպիոններ, որոնցով հպարտանում ենք: Այդպիսի անուններ են՝ Տիգրան Պետրոսյանը, Ալբերտ Ազարյանը, Յուրի Վարդանյանը, Շավարշ Կարապետյանը և շատ ուրիշներ:

Նավասարդյան խաղեր

Հին Հայաստանում տարեմուտին կազմակերպվում էին մարզական մրցումներ, որոնք կոչվում էին Նավասարդյան խաղեր: Դրանք նաև համարվում էին տոնախմբություն, որովհետև անց էին կացվում մեծ հանդիսավորությամբ: Նավասարդյան տոնախմբությունները նվիրված էին Ամանոր աստծուն և տեղի էին ունենում օգոստոսի 11-ին: Հին հունական օլիմպիական խաղերի նման Նավասարդյան տոնախմբության ժամանակ կազմակերպվում էին ոչ միայն արվեստի, գրականության, մշակույթի տարբեր ոլորտների ներկայացուցիչների մրցույթներ, այլև բազմազան մարզական խաղերի և տարբեր մարզաձևերի մրցումներ: Տոնախմբությանը մասնակցում էին գուսաններ, բանաստեղծներ, որոնք կատարում էին իրենց ստեղծագործությունները, անց էին կացվում նաև թատերախաղերի, պարերի և երգերի մրցություններ և այլն: Նավասարդյան տոնախմբության ժամանակ մարզիկները մրցում էին **վազքից, հեռացատկից, սուսերամարտից, ըմբշամարտից, գնդակախաղերից, ձիարշավից** և այլն:

Նավասարդի գլխավոր տոնակատարությունը տեղի էր ունենում Բագավանում:

Դաս 39 Հարցեր և առաջադրանքներ «Մեր հայրենիքը» գլխի կրկնության համար

1. **Տետրում լրացրո՛ւ Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող այս թերթիկը:**

- Մեր երկրի պաշտոնական անվանումն է _____
- Մայրաքաղաքն է _____
- Որտեղի՞ց է գալիս երկրի անվանումը _____
- Մեր երկրի տարածքը, բնակչությունը (թիվը) _____
- Մեր հարևան երկրներն են _____
- Մեր պետականության խորհրդանիշներն են _____

2. **Յուրաքանչյուր ամսաթվի դիմաց տետրում նշի՛ր տոնի անվանումը:**

Հունվարի 1 –
Հունվարի 6 –
Հունվարի 28 –
Մարտի 8 –
Մայիսի 9 –
Հուլիսի 5 –
Սեպտեմբերի 21 –

3. **Ե՞րբ են տեղի ունեցել հետևյալ իրադարձությունները: Յուրաքանչյուրի դիմաց տետրում գրի՛ր տարեթիվը և դարը:**

Հայոց գրերի գյուտը –
Հունաստանում կայացած առաջին օլիմպիական խաղերը –
Քո մայրիկի ծնունդը –
Քո ծնունդը –
Շուշիի ազատագրումը –

4. Ո՞վ է Հովհաննես Թումանյանը: Ի՞նչ գիտես նրա մասին: Համառոտ (գրավոր կամ բանավոր) պատմի՛ր այդ մասին:

5. Ի՞նչ հայ հերոսներ գիտես: Թվի՛ր նրանց անունները և համառոտ (գրավոր կամ բանավոր) պատմի՛ր նրանց մասին:

6. Ո՞վ է Բյուրականի աստղադիտարանի հիմնադիրը: Ի՞նչ գիտես նրա մասին:

7. Թվի՛ր մի քանի հայ մարզիկների անուններ, որոնց հաղթանակների մասին գիտի ամբողջ աշխարհը:

Դաս 40 Հորիզոն, հորիզոնի կողմերը

Արուսյակը բարձրացել էր իրենց գյուղի մոտակա ամենաբարձր լեռան գագաթը, որտեղից նա շատ բան տեսավ. այսպես, օրինակ՝ երևում էին հեռվում ձգվող մշուշապատ լեռները, հարևան գյուղի անտառապատ սարալանջը, ձորում շառաչող արագահոս գետը, գյուղից շատ հեռու գտնվող ժայռի վրա կառուցված եկեղեցու զանգակատունը և այլն: Արուսյակը այնքան մեծ տարածություն էր տեսնում, որ մտածեց. «Ա՛յ, եթե մի լավ հեռադիտակ ունենայի, ապա դրանով կարող էի տեսնել ողջ երկրագունդը»: Նա հասկացավ, որ տարածությունը առավել լավ է երևում, օրինակ, բաց տեղանքում, լեռների գագաթից:

Մեր շուրջն ընկած տեսանելի տարածությունն անվանում են **հորիզոն**: Արուսյակը տեսնում էր նաև, որ հեռվում երկինքը կարծես միանում է Երկրին: Երկնքի և Երկրի միացման այդ սահմանը անվանում են **հորիզոնի գիծ**: Բաց տեղանքում առաջ շարժվելիս նկատելի է, որ հորիզոնի գիծը անընդհատ հեռանում է մեզանից: Այսինքն՝ **հորիզոնի գծին հասնելն անհնար է**:

Հորիզոնն ունի չորս հիմնական և չորս միջանկյալ կողմեր: Հորիզոնի կողմերը օրվա ցանկացած պահին կարելի է որոշել **կողմնացույց** կոչվող սարքի օգնությամբ: Կողմնացույցի հիմնական մասը մագնիսացված սլաքն է, որը տեղադրված է կլոր տուփի մեջ՝ ասեղի ծայրին, իսկ սլաքի շուրջը պատկերված է թվատախտակը: Եթե կողմնացույցը հորիզոնական դիրքում

պահենք մեր ափի մեջ կամ դնենք որևէ հարթ տեղում, **ապա սլաքի կապույտ կամ սև ծայրը միշտ ցույց կտա հյուսիսը, իսկ կարմիր ծայրը՝ հարավը** (եթե թվատախտակի վրա նշված «Հյուսիս» ուղղության հետ կապույտ սլաքը չի համընկնում, ապա թվատախտակը պտտիր այնքան, մինչև այն համընկնի): **Սլաքի աջ կողմը ցույց կտա արևելքը, իսկ ձախը՝ արևմուտքը:**

Հորիզոնն ունի նաև միջանկյալ կողմեր. հյուսիսի և արևելքի միջև գտնվում է **հյուսիս-արևելքը**, արևելքի և հարավի միջև՝ **հարավ-արևելքը**, հարավի և արևմուտքի միջև՝ **հարավ-արևմուտքը**, արևմուտքի և հյուսիսի միջև՝ **հյուսիս-արևմուտքը** (նկ. 42):



Նկ. 42 Հորիզոնի հիմնական և միջանկյալ կողմերը

Կողմնացույցը ստեղծվել է հին ժամանակներում Չինաստանում: Եվրոպայում կողմնացույցը լայն տարածում է ստացել XII դարում:

Բնության մեջ անծանոթ տեղանքում չմոլորվելու համար անհրաժեշտ է իմանալ վերադարձի բոլոր հնարավոր ճանապարհները: Դրա համար անհրաժեշտ է տեղանքում ճիշտ կողմնորոշվել: **Կողմնորոշվել տեղանքում նշանակում է՝ որոշել սեփական դիրքը հորիզոնի կողմերի և տեղային առարկաների նկատմամբ**: Անծանոթ տեղանքում արշավների, ակտիվ հանգստի մեկնելիս միշտ կողմնացույց վերցրու: Հիշիր, եթե քեզ հայտնի վայրից դեպի անծանոթ վայր գնացել ես հյուսիս-արևելք ուղղությամբ, ապա վերադառնալիս պետք է շարժվես դեպի հարավ-արևմուտք:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ի՞նչ է հորիզոնը և հորիզոնի գիծը:**
2. **Նշի՛ր ձեր տեղանքի այն վայրերը, որտեղից կարելի է տեսնել ամենաընդարձակ տարածքները:**
3. **Որո՞նք են հորիզոնի հիմնական և միջանկյալ կողմերը:**
4. **Երբ գտնվես դաշտում, նայի՛ր շուրջդ: Դիտի՛ր հորիզոնը և հորիզոնի գիծը:**
5. **Որոշի՛ր, թե հորիզոնի ո՞ր կողմն է երևում քո ննջասենյակի պատուհանից:**

Ես արդեն գիտեմ...

Մեր շուրջն ընկած տեսանելի տարածությունն անվանում են հորիզոն: Հորիզոնի գծի երկարությունը կախված է տեղանքի ռելիեֆից, դիտողի դիրքի բարձրությունից: Հորիզոնն ունի չորս հիմնական և չորս միջանկյալ կողմեր: Հորիզոնի կողմերը կարելի է որոշել կողմնացույցի միջոցով:

Ինչպե՞ս կարելի է կողմնորոշվել տեղային առարկաներով

Միշտ չէ, որ մարդը, լինելով անծանոթ վայրում, կողմնացույց է ունենում: Իսկ ինչպե՞ս կարելի է որոշել հորիզոնի կողմերը տեղային տարբեր առարկաների, նույնիսկ երկնային մարմինների միջոցով: Ժամանակի ընթացքում մարդիկ սովորել են հորիզոնի կողմերը ճանաչել բնության կողմնորոշիչների միջոցով: Անհրաժեշտ է լավ իմանալ դրանք:

- Բաց տեղանքում միայնակ ծառի մի կողմում ճյուղերն ավելի փարթամ են: Ավելի հաճախ դա լինում է ծառի հարավային կողմում:
- Հիշո՞ւմ ես ծառի կոճղի տարեկան օղակները, որոնց քանակով որոշում են ծառի տարիքը: Եթե նայես կոճղին, ապա կնկատես, որ տարեկան օղակները նրա մի մասում մոտենում են իրար, իսկ դրան հակառակ կողմում՝ հեռանում: Եթե օղակների ամենամոտ դասավորված մասը կոճղի կենտրոնից սլաքով միացնենք իրար, ապա այն ցույց կտա դեպի հյուսիս ուղղությունը:
- Անձրևից հետո ամենից շուտ չորանում են առարկաների հարավային կողմերը: Ամենաշուտը հալչում է դեպի հարավ ուղղված լանջերի ձյունը:
- Մոսները հիմնականում աճում են կոճղի, ծառի, թփի հյուսիսային կողմում:
- Արևածաղիկը առավոտյան ժամը 6-ից 7-ը թեքվում է դեպի արևելք, ժամը 12-ին՝ հարավ, ժամը 18-ից 21-ը՝ արևմուտք:

• Եթե ուղիղ կեսօրին թիկունքով կանգնես դեպի արևը, ապա քո ստվերը ցույց կտա հյուսիսը:

• Աստղազարդ երկնքում շերեփ հիշեցնող Մեծ Արջի համաստեղության 7 աստղերն այնպես են դասավորված, որ եթե շերեփի առջևի պատի երկու աստղերը ուղիղ գծով միացնենք և այդ հատվածի երկարության չափով 5 անգամ մտովի շարունակենք գիծը, կհասնենք պայծառ Բևեռային աստղին (նկ. 43): Մտովի մեր կողմից գծված այդ գիծը ցույց է տալիս հյուսիս ուղղությունը:



Նկ. 43 Մեծ Արջի և Փոքր Արջի համաստեղությունները, Բևեռային աստղը

Դաս 41 Ճանապարհորդությունները վաղ անցյալում

Շրջակա բնության մասին գիտելիքները միշտ էլ անհրաժեշտ են եղել մարդուն: Դեռևս հնագույն ժամանակներից մարդը ուսումնասիրել է իր շրջապատը՝ սնունդ հայթայթելու համար: Սննդի համար նոր տարածքներ որոնելով, ռազմական արշավանքներ կազմակերպելով և առևտուր անելով՝ մարդը նոր գիտելիքներ էր կուտակում Երկրի մասին:



Հին եգիպտական առևտրական նավ

Մի քանի հազար տարի առաջ մարդիկ սովորեցին պատրաստել թիավարվող նավեր և առագաստանավեր, որոնց շնորհիվ նրանք կարողացան հայտնագործել նոր երկրներ և ուսումնասիրել դրանք:

Հին եգիպտոսը մարդկային մշակույթի հնագույն օջախներից մեկն է: Եգիպտոսը հարավից և արևմուտքից շրջափակված էր դժվար անցանելի անապատներով, իսկ հյուսիսում Միջերկրական ծովն էր ողողում նրա ափերը: Հազարավոր տարիներ առաջ եգիպտացիները կարողացել են հաղթահարել այդ արգելքները.

իրենց երկրից բացի նրանք ծանոթ էին նաև Երկրի բազմաթիվ այլ շրջանների: Ծովային մշտական կապ էր հաստատվել Լիբանանի, Սիրիայի, Պաղեստինի միջև: Լիբանանից, օրինակ, Եգիպտոսը ներկրում էր իրեն անհրաժեշտ ամբողջ փայտանյութը: Կարմիր ծովի ափերին գտնվող երկրներից Եգիպտոսը ծովային ուղիներով ձեռք էր բերում ոսկի, արծաթ, հոտավետ խեժեր:

Մեզ հասած տեղեկություններից պարզվում է, որ եգիպտացիները խիզախ նավարկություններ են կատարել ոչ միայն Միջերկրական ու Կարմիր ծովերում:

Քրիստոսից առաջ 597-594 թվականներին Նեխո 2-րդ փարավոնի կազմակերպած արշավախումբը շրջանցեց Աֆրիկան: Նրանք նավարկության դուրս եկան Կարմիր ծովից, առաջին անգամ մուտք գործեցին հարավային կիսագունդ, ապա Ջիբրալթարի նեղուցով ու Միջերկրական ծովով նորից վերադարձան Եգիպտոս (նկ. 44):

Նկ. 44 Նեխո 2-րդ փարավոնի շուրջաֆրիկյան ճանապարհորդությունը

Միջագետքը նույնպես համարվում է մարդկային մշակույթի ամենահին օջախներից մեկը: Միջագետքում են ձևավորվել

Բաբելոն և **Ասորեստան** հնագույն պետությունները: Բաբելա-ասուրական վաճառականները այցելում էին ոչ միայն Եգիպտոս, այլև Հայաստան, Պարսկաստան, անգամ՝ Հնդկաստան: Նրանք իրենց երկրով հոսող Տիգրիս և Եփրատ գետերով, ապա բաց ծովով կատարում էին հեռավոր ճամփորդություններ: Առևտուրը հեռավոր երկրների հետ նպաստել է աշխարհագրական գիտելիքների կուտակմանը և զարգացմանը:

Աշխարհի բաբելոնյան քարտեզը (Ք.ա. V դար)

Փյունիկիա հնագույն պետությունը գտնվում էր Միջերկրական ծովի արևելյան ափին: Այստեղ է ստեղծվել մեզ հայտնի ամենահին այբուբենը: Փյունիկեցիները հայտնագործել են Միջերկրական ծովի բազմաթիվ կղզիներ և հասել մինչև Ջիբրալթարի նեղուց: Ենթադրվում է, որ նրանք հասել են նույնիսկ մինչև Բրիտանական կղզիներ: Փյունիկեցիները մեծ դեր են ունեցել եվրոպացիներին Արևելքի երկրների բարձր մշակույթին հաղորդակից դարձնելու գործում: Գիտնականները կարծում են, որ հենց փյունիկերեն «Ասու» և «Էրեբ» անուններն են, որ հին հունարենում դարձան «Ասիա» ու «Եվրոպա» և նրանցից էլ անցան մյուս ժողովուրդներին:

Հին հույներից շատ շատերն են հեռավոր ճանապարհորդություններ կատարել: Մեզ հայտնի հույն առաջին ճանապարհորդը համարվում է **Հերոդոտոսը**: Նա հին աշխարհի խոշորագույն ճանապարհորդն է: Հերոդոտոսն իր «Պատմություն» աշխատության մեջ շատ տեղեկություններ է հաղորդում իր այցելած երկրների ու նրանց բնակիչների սովորությունների, արհեստների մասին: Այդ աշխատության մեջ արժեքավոր տեղեկություններ կան Ք.ա. 5-րդ դարի Հայաստանի և նրա ու Միջագետքի երկրների միջև կատարվող առևտրի մասին:

Աշխարհը ճանաչելու գործում հին հույների համար մեծ նշանակություն ունեցան **Ալեքսանդր Մակեդոնացու** ռազմական

արշավանքները: Ընդարձակելով իր տերության սահմանները՝ Ալեքսանդր Մակեդոնացին հասավ մինչև Հնդկաստան:

Ուղտերի քարավան

Հին Հռոմի տիրապետության ժամանակաշրջանում մարդկությանը հայտնի աշխարհի չափերը բավականին ընդարձակվեցին: Դրան մեծապես նպաստում էին տնտեսական աշխույժ կապերը և ռազմական արշավանքներն իրենցից դեպի արևմուտք, արևելք, հյուսիս և դեպի Աֆրիկա: Առևտրական կապեր հաստատվեցին նույնիսկ հեռավոր Չինաստանի հետ:

Հեռավոր ժամանակներում մարդիկ փորձում էին Երկիրը պատկերել գծագրերի տեսքով: Դրանք էլ առաջին քարտեզներն էին հին աշխարհում:

Հին Հռոմում մեծ հաջողությամբ կազմում էին «Ճանապարհային» քարտեզներ: Մեզ են հասել նաև այդ ժամանակի հայտնի երկրների նկարագրությունները:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչո՞ւ են անհրաժեշտ բնության մասին գիտելիքները:**
2. **Ինչպե՞ս են կուտակվել այդ գիտելիքները: Պատմի՛ր այդ գործում ունեցած տարբեր ժողովուրդների ավանդի մասին:**
3. **Դեպի ո՞ւր կուզենայիր ճանապարհորդել ինքդ:**

Եվ սրդեն գիրեմ...

Շրջակա բնության մասին գիտելիքները միշտ էլ անհրաժեշտ են մարդուն: Այդ գիտելիքները կուտակվել են աստիճանաբար, ժամանակի ընթացքում՝ սկսած շատ վաղ անցյալից՝ շատ ու շատ ժողովուրդների մեծ ջանքերի և հերոսությունների շնորհիվ:

Դաս 42 Ճանապարհորդությունները դեպի Հնդկաստան և Չինաստան

Մարկո Պոլո

Հին աշխարհի ինչ պետություններ գիտես:

Հնդկաստանը և Չինաստանը հնագույն մշակույթ ունեցող երկրներ են: Հնում եվրոպացիները դրանք համարում էին հրաշքների և անհամար հարստությունների երկրներ: Դա է պատճառը, որ, չնայած բազմաթիվ դժվարություններին, եվրոպացի ճանապարհորդներն ու առևտրականները ձգտում էին ամեն կերպ հասնել Հնդկաստան և Չինաստան:

Այդ նպատակով, 13-րդ դարի կեսերին վենետիկցի հայտնի վաճառական, ճանապարհորդ **Մարկո Պոլոն** ուղևորվեց դեպի Արևելք: Այդ ճանապարհորդությունը շատ երկար տևեց, սակայն առանց դժվարությունների նա հասավ Չինաստան: Այստեղ նա մնաց շուրջ 17 տարի: Այդ տարիների ընթացքում Մարկո Պոլոն կարողացավ լավ ծանոթանալ այդ երկրի մեծ մասին և նրա հարևան մի քանի երկրներին (Մոնղոլիա, Հնդկաստան): Նա իր «Աշխարհի բազմազանության մասին» գրքում բազմաթիվ էջեր է նվիրել Չինաստանի հարստությունների, նրա ոսկով ու թանկարժեք քարերով զարդարված պալատների, առևտրական խոշոր քաղաքների, բարեկարգ ճանապարհների ու կամուրջների, անգին մետաքսի,

Հատված Չինական մեծ պարսպից


Թաջ Մահալի դամբարանը Հնդկաստանում

չին ժողովրդի զբաղմունքի և կենցաղի նկարագրություններին: Մարկո Պոլոյի գրքում արժեքավոր բազմաթիվ տեղեկություններ են հաղորդվում նաև հայկական Կիլիկիայի և Մեծ Հայքի վերաբերյալ:

Դեպի Չինաստան կատարած իր ուղևորությամբ Մարկո Պոլոն եվրոպացիների համար վերահայտնագործեց Արևմուտքն Արևելքի հետ կապող հնագույն, բայց վաղուց մոռացված քարավանային այն ճանապարհը, որն անցնում էր նաև Հայաստանի, Վրաստանի և Պարսկաստանի տարածքներով:

Պակաս նշանակություն չունեցավ նաև Մարկո Պոլոյի վերադարձը Չինաստանից: Նա վերադարձավ ծովային ճանապարհով մինչև Պարսից ծոց, որտեղից էլ ցամաքով հասավ Վենետիկ (նկ. 45):

Նկ. 45 Մարկո Պոլոյի ճանապարհորդությունը

Դեպի Հնդկաստան առաջիններից մեկը ճանապարհորդել է ռուս վաճառական **Աֆանասի Նիկիտինը** (նկ. 46): Այդ ճանապարհորդությունը նա նկարագրել է իր «Ճանապարհորդություն երեք ծովերից այն կողմ» գրքում: Գրքի վերնագրի «երեք ծովերի» տակ պետք է հասկանալ Կասպից ծովը, Հնդկական

օվկիանոսը և Սև ծովը: Այդ ընթացքում նա ճանապարհորդել է նաև Պարսկաստանում:



Նկ. 47 Ա. Նիկիտինի ճանապարհորդությունը

Գրքում Ա. Նիկիտինը նկարագրում է Հնդկաստանի փարթամ բնությունն ու բուսականությունը, թռչուններին ու կենդանիներին: Նա մեծ զարմանքով է խոսում վարժեցրած փղերի ու կապիկների մասին: Ճանապարհորդի հուշերում նկարագրված են Հնդկաստանի բնակչության կենցաղը, սովորություններն ու ավանդությունները, կրոնական ծիսակատարությունները, առևտուրը, երկրի կառավարման ձևը: «Երկիրը խիստ բազմամարդ է: Գյուղի մարդիկ շատ աղքատ են, համարյա մերկ, բոյարները (իշխանները) շռայլ են ու հարուստ: Նրանց ման են տալիս արծաթե պատգարակների վրա և նրանց առջևից ոսկեզօծ ծածկոցներով փղեր և ձիեր են տանում: Հնդիկները բնավ միս չեն ուտում, այլ գործածում են բրինձ և զանազան բանջարեղեն, որ եփում են յուղով և կաթով»,– գրում է Նիկիտինը:

Աֆանասի Նիկիտինը առաջին եվրոպացին էր, որ մանրամասն պատմեց հեռավոր Հնդկաստանի մասին:

15-րդ դարում դեպի Հնդկաստան տանող ցամաքային ճանապարհը դառնում է խիստ վտանգավոր, քանի որ թուրքերն ամբողջությամբ նվաճում են Փոքր Ասիա թերակղզին: Նոր անվտանգ ծովային ճանապարհ դեպի Հնդկաստան հայտնագործում է պորտուգալացի ծովագնաց **Վասկո դա Գաման**: Նրա նավերը, շրջանցելով Աֆրիկա մայրցամաքը հարավից, կտրելով Հնդկական օվկիանոսի ջրերը, 1498թ. հասան Հնդկաստանի ափերը (նկ. 48):



Նկ. 48 Վասկո դա Գամայի ճանապարհորդությունը

Արաբ վաճառականները, այցելելով ժամանակի համար հայտնի գրեթե բոլոր երկրները՝ Իսպանիայից մինչև Հնդկաստան, Չինաստան ու Ճապոնիա և Սկանդինավյան թերակղզուց մինչև Մադագասկար, նույնպես նպաստեցին աշխարհի մասին նոր գիտելիքների ձեռքբերմանը: Արաբների շնորհիվ եվրոպացիներին հայտնի դարձան հնդիկների և չինացիների նվաճումները: Օրինակ՝ արաբների միջոցով են մեզ հասել արաբական թվանշանները, մինչդեռ իրականում դրանք ստեղծել են հնդիկները: Հնդիկներին է պատկանում նաև շախմատի գյուտը: Իսկ թղթի, թղթադրամի, վառոդի, շաքարի, կողմնացույցի, մետաքսի, ճենապակու, երկրաշարժը գրանցող սարքի, գրատպության գյուտերի հեղինակը

Հնդիկների գյուտը՝ շախմատը, չինացիների գյուտը՝ կողմնացույցը

չինացիներն են համարվում: Եվ պատահական չէ, որ հայերենում ամենայն գեղեցիկն ու յուրահատուկը անվանում են **չնաշխարհիկ**, այսինքն՝ «չին աշխարհից բերված»: Կողմնացույցի շնորհիվ աշխարհագրական շատ ու շատ մեծարժեք հայտնագործություններ իրականացվեցին:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչո՞ւ էին Հնդկաստանը և Չինաստանը գրավել եվրոպացիների ուշադրությունը:**
2. **Քեզ ի՞նչ է հայտնի այդ երկրների մասին:**
3. **Դասագրքի քարտեզներով հետևի՛ր կատարված ճանապարհորդությունների ընթացքին: Ի՞նչ հետևություններ կարելի է կատարել:**
4. **15-րդ դարում ի՞նչ նոր ճանապարհ հայտնագործվեց դեպի Հնդկաստան:**

Ես արդեն գիտեմ ...

Միջնադարում եվրոպացիների համար կարևոր նշանակություն են ունեցել Հնդկաստանը և Չինաստանը: Առևտրային կապերը, ռազմական արշավանքները և ճանապարհորդությունները էլ ավելի են ընդարձակել մարդկանց ճանաչողության սահմանները Երկիր մոլորակի վերաբերյալ:

Դաս 43-44 Ամերիկայի հայտնագործումը

Ինչպես գիտես, միջին դարերում Հնդկաստանը և Չինաստանը հարուստ երկրների համբավ ունեին: Վաճառականներն այնտեղից բերում էին թանկարժեք ապրանքներ՝ մարգարիտ, սուրճ, թեյ, համեմունք, մետաքս, ոսկի, արծաթ: Նրանք այդ երանելի երկրներ էին հասնում կիզիչ անապատներով, բարձրաբերձ լեռներով ու խորը կիրճերով անցնող, վտանգներով լի ճանապարհներով: Նախորդ դասից էլ իմացար, որ թուրք ավազակներն ու ծովահենները փակել էին դեպի Հնդկաստան և Չինաստան տանող քարավանային ճանապարհները և անխնա կողոպտում էին վաճառականներին կամ էլ նրանցից պահանջում էին բարձր մաքսեր:

Դրա համար էլ շատերի ցանկությունն էր գտնել դեպի Հնդկաստան և Չինաստան տանող կարճ ու ապահով ճանապարհներ: Այդ շատերից մեկն էր նաև **Քրիստափոր Կոլումբոսը**:

Ք. Կոլումբոս

Արևելքի երկրների ճոխությունների մասին նա կարդացել էր Մարկո Պոլոյի գրքից, լսել էր բազում պատմություններ դրանց մասին, որոնք նրա երևակայության վրա մեծ ազդեցություն էին գործել: Կոլումբոսը ընդունում էր Երկրի գնդաձևությունը: Նա ուսումնասիրել էր ժամանակի աշխարհի նոր քարտեզները, որտեղ Եվրոպայից արևմուտք պատկերված էին Ասիայի արևելյան ափերը: Կոլումբոսը համոզված էր, որ կարելի է Ասիայի արևելյան ափերը հասնել Ատլանտյան օվկիանոսով՝ անընդհատ դեպի արևմուտք շարժվելով:

Նա իր այդ ծրագիրը ներկայացնում է Պորտուգալիայի թագավորին: Սակայն մերժում ստանալով՝ թողնում է այդ երկիրը և տեղափոխվում Իսպանիա: Այստեղ երկար ժամանակ բանակցում է Իզաբելա թագուհու հետ, և վերջապես բախտը ժպտում է նրան: Թագուհին համաձայնում է աջակցել Կոլումբոսին՝ իրականացնելու իր համարձակ ծրագիրը (նկ. 49):



Նկ. 49 Կոլումբոսի ճանապարհորդությունները

Եվ ահա, 1492 թվականի օգոստոսի 3-ին Կոլումբոսի երեք նավից բաղկացած նավախումբը 90 հոգանոց անձնակազմով

դուրս է գալիս իսպանական Պալոս նավահանգստից և ուղղություն վերցնում դեպի արևմուտք:

Մոտ մեկուկես ամիս շարունակ Կոլումբոսի առագաստանավերը համընթաց քամու օգնությամբ հանդարտ շարժվում էին Ատլանտյան օվկիանոսով: Շուտով նավաստիները հեռվում նկատում են կանաչ տարածություն: Թվում էր, թե դա երկար սպասված ցամաքն էր:

Կոլումբոսի «Սանտա Մարիա» նավը

Սակայն իրականում դա **Սարգասյան անափ ծովն էր,** որտեղ լողում էին մեծ քանակի ջրիմուռներ: Հետո երևում են թռչունների երամներ: Նորից է ուրախությունը համակում բոլորին, ու նորից դրան հաջորդում է դառը հիասթափությունը: Երկարատև նավարկությունը հուսահատեցնում է նավաստիներին: Նավախմբում խռովություն է բարձրանում: Խռովարարները Կոլումբոսից պահանջում են անհապաղ Իսպանիա վերադառնալ: Կոլումբոսին դժվարությամբ հաջողվում է խաղաղեցնել անձնակազմին և շարունակել ճանապարհը: Հոկտեմբերի 12-ին՝ գիշերվա 2-ին, առջևից ընթացող նավից լսվում են «ցամա՛ք, ցամա՛ք» բացականչությունները: Առավոտյան ճանապարհորդների առջև գծագրվում են գեղեցիկ կղզու՝ փարթամ բուսականությամբ ծածկված ափերը: Կոլումբոսը կղզին անվանում է **«Սան Սալվադոր»,** այսինքն՝ «Սուրբ Փրկիչ»: Կոլումբոսի և նրա մարդկանց ուրախությունն անսահման մեծ էր: Կոլումբոսին թվում էր, թե իրոք իրականացել էր իր մտահղացումը:

Թագավորական թարգմանիչը կղզու բնակիչներին հարցեր է տալիս լատիներեն, հունարեն, անգամ՝ հայերեն, բայց՝ անօգուտ: Նրան չեն հասկանում: Իսպանացիներին զարմացնում էր բնիկների ոսկյա զարդերի առատությունը, որը նրանք հեշտությամբ փոխանակում էին շատ հասարակ իրերի հետ:

Այդ կղզին իսպանական տիրապետություն հայտարարելուց հետո, Կոլումբոսը շարունակում է նավարկել դեպի արևմուտք և հայտնագործում է **Կուբա կղզին:**

Կոլումբոսը կարծում էր, թե ինքը հասել է Չինաստանի արևելյան ափերը, Հնդկաստան, սակայն նա այստեղ չտեսավ ո՛չ

հարուստ քաղաքներ, ո՛չ թանկարժեք քարեր ու ոսկի և ո՛չ էլ համեմունք: Փոխարենը նրանք առաջին անգամ ծանոթանում են ծխախոտի գործածությանը, կարտոֆիլի, պոմիդորի, սեխի, եգիպտացորենի և եվրոպացիներին մինչ այդ անծանոթ շատ այլ մշակաբույսերի, որոնք հետագայում տարածվեցին բոլոր մայրցամաքներում:

Երկար փորձություններից ու մեծ արկածներից հետո 1493 թվականի հունիսի 16-ին Կոլումբոսը վերադառնում է Իսպանիա: Իսպանիայում նա ընդունվեց մեծ շուքով ու ցնծությամբ և թագավորական հրովարտակով մեծարվեց որպես ծովակալ և հայտնագործված երկրների փոխարքա: Նրա հաղթանակը լիակատար էր:



Կոլումբոսի արշավախմբի հանդիպումները հնդկացիների հետ

Դրանից հետո Կոլումբոսը 1493-1504 թվականների ընթացքում ևս երեք անգամ ուղևորվեց դեպի արևմուտք, հայտնաբերեց նորանոր կղզիներ ու երկրներ, սակայն մինչև իր կյանքի վերջն էլ նա համոզված էր, որ հասել է Ասիայի արևելյան ափերին, Հնդկաստան: Նույնիսկ տեղաբնիկներին սխալմամբ **հնդկացիներ** անվանեց:

Կոլումբոսի մահից հետո մարդիկ իմացան, որ նրա հայտնաբերածը ոչ թե Ասիան է, այլ Նոր աշխարհ: Կոլումբոսի մեծագույն սխալը աշխարհագրական մեծագույն հայտնագործության պատճառ էր դարձել:

Իսկ ինչո՞ւ Նոր աշխարհը Կոլումբիա կոչվելու փոխարեն անարդարացիորեն Ամերիկա կոչվեց: Նոր աշխարհամասը **Ամերիկա** անվանվեց ի պատիվ մեկ այլ ճանապարհորդի՝ **Ամերիգո Վեսպուչիի**, որն առաջինը այն կարծիքը հայտնեց, որ Կոլումբոսը հայտնագործել է ոչ թե Ասիա տանող նոր ծովային ուղին, այլ Նոր աշխարհ:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչո՞ւ էին եվրոպացիները ձգտում Հնդկաստան և Չինաստան հասնել ծովային ուղով:**
2. **Ինչպե՞ս էր ծրագրել Կոլումբոսը հասնել Հնդկաստան:**
3. **Ի՞նչ նշանակություն ունեցան Կոլումբոսի ճանապարհորդությունները մարդկության համար:**
4. **Աշխարհի քարտեզով գտի՛ր, թե աշխարհագրական ի՞նչ անուններ կան ի պատիվ Կոլումբոսի:**
5. **Ինչո՞ւ Նոր աշխարհը Ամերիկա կոչվեց:**

Ես արդեն գիտեմ ...

Ամերիկա աշխարհամասը 1492 թվականին հայտնագործել է Քրիստափոր Կոլումբոսը: Իսկ Ամերիկա այն կոչվել է ի պատիվ մեկ ուրիշ ճանապարհորդի՝ Ամերիգո Վեսպուչիի:

Թևավոր խոսքերի աշխարհում. «Կոլումբոսի ձու»

Կոլումբոսի աներևակայելի հաջողությունը նրան սկզբնական շրջանում մեծ փառքի ու մեծարանքի արժանացրեց: Բայց հետագայում աստիճանաբար սկսեցին թերագնահատել նրա գործը: Մի օր, երբ Կոլումբոսը ճաշի էր հրավիրված կարդինալի մոտ, և խոսք է բացվում Ամերիկայի հայտնագործման մասին, հյուրերից մեկն ասում է, թե դա այնքան էլ մեծ գործ չի եղել, այլ շատ պարզ բան է եղել: Սեղանին խաշած ձու է դրված լինում: Կոլումբոսը ներկաներին առաջարկում է ձուն ծայրի վրա կանգնեցնել: Բոլորը փորձում են, բայց ոչ ոք չի կարողանում: Կոլումբոսը վերցնում է ձուն, ծայրը խփում, տափակեցնում և կանգնեցնում է ամանի մեջ: «Պա՜հ, այդպես հո մենք էլ կանեինք»,– ձայն են տալիս ներկաները: Բայց Կոլումբոսը ժպտալով պատասխանում է. «Գիտեմ, որ դուք էլ կարող էիք, բայց տարբերությունն այն է, որ ես առաջինը արեցի»:

Ըստ Կամսար Ավետիսյանի

Դաս 45 Ճանապարհորդություններ Աֆրիկայով

Եգիպտական բուրգեր

Տեսարան Սահարա անապատից

Հիշի՛ր Վասկո դա Գամայի շուրջ-աֆրիկյան ճանապարհորդությունը:

Դու արդեն գիտես, որ Վասկո դա Գամայի ղեկավարած նավատորմը դեպի Հնդկաստան տանող ծովային ճանապարհի հայտնագործման նպատակով, Աֆրիկան հարավից շրջանցելով, հասավ Հնդկաստան և ապացուցեց, որ Աֆրիկան առանձին մայրցամաք է:

Աֆրիկայի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջանները մարդկության հնագույն բնօրրաններից են: Այստեղ՝ Նեղոս գետի ստորին հոսանքում էր գտնվում **Հին Եգիպտոսը**, որը հայտնի է իր բուրգերով: Հետաքրքիր է, որ այս շրջաններից հարավ ընկած է աշխարհի ամենամեծ անապատը՝ **Սահարան**՝ իր անծայրածիր և անանցանելի անապատային ավազներով:

Սահարան, մայրցամաքի բարձրադիր ափերը, նրա կենտրոնական շրջանների խոնավ ու տոթ օդը, դժվարանցանելի անտառները բնական արգելք են հանդիսացել Աֆրիկայի ներքին շրջանների հետազոտման գործում: Այս մայրցամաքի ներքին շրջաններին աշխարհը ծանոթացավ եվրոպացիների միջոցով, հիմնականում 1850-ական թվականներից հետո կատարված հետազոտությունների արդյունքում:

Աֆրիկայի ներքին շրջանները հետազոտել են շատ ճանապարհորդներ, արշավախմբեր, որոնցից **առանձնանում են անգլիացի հետազոտող Դավիթ Լիվինգստոնի գլխավորած արշավախմբի շուրջ 30 տարի կատարած ուսումնասիրությունները**:

Դ. Լիվինգստոն

Լիվինգստոնը հասարակածից հարավ ընկած Աֆրիկայի առաջին ուսումնասիրողներից է: Օգտվելով տեղաբնիկների բարյացակամ վերաբերմունքից՝ նա ճանապար-

հորդում է Հարավային Աֆրիկայով: **Զամբեզի գետի** գետաբերանից դեպի ակունք շարժվելով՝ նա հայտնաբերում է աշխարհի գեղատեսիլ ջրվեժներից մեկը և այն կոչում է Անգլիայի թագուհի **Վիկտորիայի** անունով: **Տանգանիկա** և **Նյասա լճերի** հայտնագործումը և Վիկտորիա լճի ուսումնասիրությունը Լիվինգստոնին մղում են նոր ճանապարհորդությունների, որոնց նպատակը Աֆրիկայի ամենաերկար գետի՝ Նեղոսի ակունքների հայտնագործումն էր: Վիկտորիա լիճ թափվող գետերի ուսումնասիրության արդյունքում Լիվինգստոնը հայտնագործեց Նեղոսին ծնունդ տվող վտակներից **Սպիտակ Նեղոսը**:

Վիկտորիա ջրվեժը

Իսկ ինչո՞ւ է Նեղոսն այդպիսի հետաքրքրություն առաջացրել: Պարզվում է, որ դեռևս Հին Եգիպտոսում դարեր շարունակ Նեղոսը առեղծվածային է համարվել: Եվ դա պատահական չէ:

Նայի՛ր Աֆրիկայի քարտեզին և կտեսնես, որ Նեղոսը, կտրելով տոթակեզ հսկա անապատները, չի ցամաքում և հոսելով Եգիպտոսով՝ թափվում է Միջերկրական ծով: Նեղոսի այս առեղծվածը կապված է նրա ակունքների հայտնաբերման հետ, որը վերագրվում է Լիվինգստոնին:

Լիվինգստոնը, բազմաթիվ դժվարություններ կրելով, Կենտրոնական Աֆրիկայում ուսումնասիրել է **Կոնգո գետի** վերին հոսանքի շրջանները: Կոնգոյի ստորին հոսանքում գտնվող աստիճանակերպ ջրվեժներից մեկն այժմ կոչվում է Լիվինգստոնի անունով:

Աֆրիկայի նշանավոր հետազոտողներից է անգլիացի **Սթենլին**, որն անհայտ կորած, արդեն հյուծված ու հիվանդ Լիվինգստոնին գտնելուց հետո շարունակեց նրա գործը: Հանդիպելով տեղաբնիկների դիմադրությանը, ենթարկվելով մեծ վտանգների՝ Սթենլին Կենտրոնական Աֆրիկայում հայտնագործեց աշխարհագրական նոր օբյեկտներ, որոնց նկարագրերը նա հրատարակեց «Աֆրիկայի խորքերում» գրքում:

Հարկ է նշել, որ ինչպես մյուս ճանապարհորդությունները, այնպես էլ Աֆրիկայի հետազոտումը, իր դրական կողմերով հանդերձ հանգեցրեց նաև բացասական հետևանքների: Եվրոպացիները սկսեցին Աֆրիկայի տեղաբնիկներին՝ **սևամորթներին**, որպես ստրուկներ վաճառել նոր հայտնագործված Ամերիկայում:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչո՞ւ Աֆրիկայի ներքին շրջանները մինչև 1850-ական թվականները դեռևս անհայտ էին մնում եվրոպացիների և ասիացիների համար:**
2. **Ի՞նչ իրադարձություններ և պայմաններ խթանեցին Աֆրիկայի ներքին շրջանների ուսումնասիրություններին:**
3. **Քարտեզի վրա ցո՛ւյց տուր Դավիթ Լիվինգստոնի կողմից հայտնաբերված և հետազոտված աշխարհագրական օբյեկտները:**
4. **Դասընկերոջդ հետ քննարկի՛ր, թե ինչ դրական և բացասական հետևանքներ ունեցան Աֆրիկայի ներքին շրջանների ուսումնասիրությունները:**

Եվ սրդեն գիրքեմ...

Սահարա անապատը, Աֆրիկայի բարձրադիր ափերը, կենտրոնական շրջանների խոնավ ու տոթ օդը, դժվարանցանելի անտառները բնական անմատչելի արգելքի դեր են կատարել մայրցամաքի ներքին շրջանների հետազոտման գործում: Դավիթ Լիվիգստոնը հայտնագործեց Զամբեզի և Կոնգո գետերի վրա գտնվող Վիկտորիայի և իր անունով կոչվող՝ Լիվինգստոնի ջրվեժները և այլն:

Դաս 46 Ավստրալիայի հայտնագործումը

Հին աշխարհի շատ իմաստուններ համոզված էին, որ հյուսիսային կիսագնդում ընկած հսկայական ցամաքի պես, երկրագնդի հավասարակշռության պահպանման համար, հարավային կիսագնդում պետք է գտնվի մեծ, ամբողջական ցամաք: Այդ անհայտ ցամաքը փնտրել են շատ ծովագնացներ, որի արդյունքում հայտնաբերվել են Խաղաղ, Ատլանտյան և Հնդկական օվկիանոսների անհայտ շրջաններ, մեծ ու փոքր բազմաթիվ կղզիներ:

Հարավային մայրցամաքի հայտնագործմամբ զբաղվել են Եվրոպայի բոլոր ծովային հզոր տերությունները: Դրանցից ուշագրավ են հոլանդացիների արշավախմբերի՝ հատկապես **Աբել**

Թասմանի գլխավորած արշավախմբի հետազոտությունները: Թասմանը 1642 թվականին դուրս գալով Բատավիայից (Ջակարտա)՝ մոտենում է **Ավստրալիայի հյուսիսային ափերին: Այնուհետև Խաղաղ օվկիանոսում մի շարք կղզիների ուսումնասիրությունից հետո նավարկում է Ավստրալիայի արևելյան ու հարավային ափերով:** Թասմանը, նավարկելով հարավային անհայտ մայրցամաքի առափնյա ջրերով և հայտնագործելով Ավստրալիան, ապացուցեց, որ վերջինիս տարածքը այնքան էլ մեծ չէ: Սակայն հոլանդացիները աշխարհագրական այս հայտնագործությունը գաղտնի պահեցին, և աշխարհին Ավստրալիան հայտնի դարձավ ավելի քան մեկ դար հետո՝ անգլիացի ծովագնաց **Ջեյմս Կուկի** շուրջերկրյա ճանապարհորդությունների արդյունքում: **Կուկը երկրագնդի խոշոր ուսումնասիրողներից է և իրականացրել է երեք շուրջերկրյա ճանապարհորդություններ** (նկ. 50):

Ջեյմս Կուկ

Կուկին հանձնարարված էր Բրիտանական կայսրությանը ենթարկելու նպատակով հայտնաբերել Խաղաղ օվկիանոսի հարավային շրջանների ջրերում գտնվող անհայտ ցամաքային տարածքներ: **1769-1771 թվականներին նա իրականացնում է առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունը**: Դուրս գալով Անգլիայից՝ Կուկը կտրում-անցնում է Ատլանտյան օվկիանոսը, շրջանցում Հարավային Ամերիկան և ուղղվում դեպի Խաղաղ օվկիանոսի ջրերում գտվող **Ընկերության կղզիներ**: Այստեղից դուրս գալով՝ Կուկը ուղևորվում է դեպի հարավ, հասնում **Նոր Զելանդիա կղզիներ:** Այդ կղզիների շուրջը նավարկելով՝ նա նախ՝ ապացուցում է, որ դրանք կղզիներ են, ապա՝ կազմում է դրանց մանրամասն քարտեզը: Նոր Զելանդիայից Կուկն ուղևորվում է արևմուտք, ապա՝ **Ավստրալիայի** ափերը հասնելուց հետո, թեքվում է դեպի հյուսիս և դրանց երկայնքով շարունակում նավարկությունը մինչև մայրցամաքի հյուսիսային ծայրակետը: Նա Ավստրալիայի արևելյան ափերը հայտարարում է Անգլիայի տիրապետության տակ գտնվող շրջաններ և դրանք մի ընդհանուր անունով կոչում «Նոր Հարավային Ուելս»: Դրանից հետո Կուկը վերադառնում է Անգլիա:


Հյուսիսային բևեռային շրջագիծ
Հյուսիսային սառուցյալ օվկիանոս
Հյուսիսային սառուցյալ օվկիանոս
Հ Յ Ո Ւ Ս Ի Ս Ա Յ Ի Ն
Ա Մ Ե Ր Ի Կ Ա
Ե Վ Ր Ա Ս Ի Ա
Լոնդոն
Ընդհանուր ճանապարհ
Հյուսիսային սառնաշրջան
(Հավայան) կղզիներ
Հասարակած
Ա Ֆ Ր Ի Կ Ա
Հ Ա Ր Ա Վ Ա Յ Ի Ն
Ա Մ Ե Ր Ի Կ Ա
(Ռիո դե Ժանեյրո)
Հարավային արևադարձ
(Ճավա) կղզի
(Նոր Կալեդոնիա) կղզի
(Զաուկի) կղզի
Կապստադ
(Քեյփթաուն)
Ա Վ Ս Տ Ր Ա Լ Ի Ա
(Սիդնեյ)
(Նոր Զելանդիա) կղզիներ
(Թասմանիա) կղզի
(Նոր Երկիր) կղզի
(Հարավային Ջորջիայի) կղզի
(Կերգելեն) կղզիներ
Հարավային բևեռային շրջագիծ
Ա Ն Տ Ա Ր Կ Տ Ի Դ Ա
Օ Ղ Ի Ա Ն Ո Ս
Ա Ղ Ո Ւ Ց Յ Ա Լ
Ա Ղ Ո Ւ Ց Յ Ա Լ
Ա Ղ Ո Ւ Ց Յ Ա Լ

Անգնահատելի է Ջեյմս Կուկի բոլոր ճանապարհորդությունների նշանակությունը: Նրա ավանդը վիթխարի է ոչ միայն Ավստրալիայի հայտնագործման մեջ, այլև Համաշխարհային օվկիանոսի տարբեր շրջանների հետազոտման, նոր կղզիների հայտնագործման և Անտարկտիդա մայրցամաքի հայտնագործման նախապատրաստման գործում: Նա նկատելիորեն ընդարձակեց Բրիտանական կայսրության սահմանները: Պատահական չէ, որ Կուկի հայտնագործած կղզիների մեծ մասը և Ավստրալական Միությունը այժմ մտնում են **Բրիտանական Համագործակցության երկրների** մեջ:

Ջ. Կուկի վաստակը մարդկության առջև բարձր է գնահատվել, և նրա անունով են կոչվում ավելի քան 20 աշխարհագրական օբյեկտ՝ լեռ, կղզիներ, նեղուց:

Հետագայում, երբ ուսումնասիրվեցին Ավստրալիայի բուսական և կենդանական աշխարհը, բնական հարստությունները, հայտնի դարձան յուրօրինակ պարկավոր կենդանիները՝ **կենգուրուն, կոալան (պարկավոր արջ),** աշխարհի խոշոր ծառատեսակներից **էվկալիպտը** և այլն:

Կուկի կողմից Ավստրալիայի հայտնագործումից հետո անգլիացիները գաղութացրին այս յուրօրինակ մայրցամաքը: Մայրցամաքի առանձին մասեր յուրացնելիս նրանք մասսայաբար ոչնչացնում էին տեղաբնիկներին: Անգլիացիներն այստեղ բերեցին **դինգո շանը, ճագարներին,** որոնք նպաստավոր բնական պայմանների շնորհիվ վայրենացան և այնքան բազմացան, որ այժմ լուրջ վնասներ են հասցնում ոչ միայն մշակաբույսերի

ցանքսերին, այլև վայրի բնությանը: Այժմ Ավստրալիա մայրցամաքում գտնվում է բավականին զարգացած մի պետություն՝ **Ավստրալական Միությունը**:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչո՞ւ էին հին աշխարհի շատ իմաստուններ համոզված, որ գոյություն ունի հարավային մեծ ցամաք:**
2. **Ովքե՞ր և ինչպե՞ս են հայտնագործել Ավստրալիան:**
3. **Ինչո՞վ է տարբերվում Ավստրալիան մյուս մայրցամաքներից:**
4. **Օգտվելով քարտեզի մասշտաբից՝ հաշվե՛ք Ավստրալիայի իրական հեռավորությունը Աֆրիկայից:**

Ես արդեն գիտեմ...

Ավստրալիան հայտնագործվել է երկու անգամ. առաջինը՝ հոլանդացի Աբել Թասմանի, իսկ երկրորդը՝ Անգլիացի Ջեյմս Կուկի կողմից: Ավստրալիան հայտնագործվել է հարավային ցամաքի որոնման արդյունքում: Այս մայրցամաքում են ապրում կենգուրուն, պարկավոր արջը, այստեղ է աճում երկրագնդի հսկա ծառերից էվկալիպտը:

Դաս 47 Անտարկտիդայի հայտնագործումն ու հետազոտումը

Ավստրալիայի հայտնագործումից հետո Ջեյմս Կուկն իր երկրորդ ճանապարհորդությունը (1772-1775թթ.) նվիրում է հարավային մայրցամաքի հայտնագործմանը: Նրան հաջողվում է թափանցել հարավային բևեռային շրջանը: Այդ ճանապարհորդության մասին Կուկը գրում է. «Ես շրջանցել եմ հարավային կիսագնդի օվկիանոսը այնպես, որ հերքում եմ որևէ մայրցամաքի գոյության հնարավորությունը: Սակայն եթե այն հայտնաբերվի, ապա միայն բևեռի մոտերքում՝ նավարկության

համար անմատչելի վայրերում»: Ծովագնացների շրջանում Կուկի հեղինակությունն այնքան մեծ էր, որ հարավային մայրցամաքի հայտնագործմանն ուղղված ծովային արշավախմբերի ուղևորությունները նրա հայտարարությունից հետո տևական ժամանակ ընդհատվեցին:

«Վոստոկ» և «Միռնի» նավերը

Կուկի տեսակետը հերքվեց մոտ 50 տարի անց՝ ռուս ծովագնացներ Ֆ. Ֆ. Բելինսհաուզենի և Մ. Պ. Լազարևի՝ 1819–1821 թվականներին կատարած շուրջերկրյա նավարկությամբ: Նրանք «Վոստոկ» և «Միռնի» նավերով նավարկեցին Անտարկտիդայի շուրջը: 1821 թվականի հունվարի 21-ին նրանք ընդհուպ մոտեցան Անտարկտիդայի ափերին. Հարավային մայրցամաքը հայտնագործված էր:

Դրանից հետո գիտնականներն ու ծովագնացները սկսեցին մեծ դժվարությամբ ուսումնասիրել այս դժվարամատչելի, սառցապատ մայրցամաքը: 1909 թվականին Ռոբերտ Պիրիի կողմից Հյուսիսային բևեռի նվաճումից հետո սկսվում է դաժան մրցակցություն **Անտարկտիդայի գրեթե կենտրոնական մասում գտնվող Հարավային բևեռի նվաճման համար**:

Ռ. Սքոթ

Հարավային բևեռի նվաճման համար միաժամանակ կազմակերպվեցին երկու արշավախմբեր՝ բևեռախույզներ **անգլիացի Ռոբերտ Սքոթի և նորվեգացի Ռուալ Ամունդսենի** գլխավորությամբ: 1911 թվականի ամռանը երկու արշավախմբերը, գրեթե միաժամանակ, շարժվեցին դեպի Հարավային բևեռ:

Ռ. Ամունդսեն

Ամունդսենը Հարավային բևեռի նվաճումը կապում էր Շվեդիայից նոր անկախացած իր հայրենիքի՝ միջազգային ասպարեզում հեղինակության բարձրացման հետ (նկ. 51): Հարավային բևեռ հասնելու համար Ամունդսենն ընտրում է գրեթե ուղիղ գիծ կազմող երթուղի:

Ամունդսենը և իր չորս ընկերները ունեին լավ հանդերձված չորս սահնակ և դրանք քաշող լավ խնամված 52 շուն: 1911թ. հոկտեմբերի 20-ին նրանք սկսում են ուղևորությունը: Ամունդսենը ճանապարհին ստեղծում է սննդի և վառելիքի պահեստներ, իսկ ամեն մի 8 կիլոմետրի վրա՝ վերադարձի ճանապարհը չկորցնելու համար կանգնեցնում են ձյունե սյուներ: Այդպիսով՝ գնալով սահնակների բեռը թեթևանում էր, առաջ շարժվելը՝ հեշտանում:



Նկ. 51 Ռ. Ամունդսենի արշավախմբերի երթուղիները

1911թ. դեկտեմբերի 14-ին Ամունդսենը իր ընկերների հետ հաջողությամբ հասավ Հարավային բևեռ: Մի քանի ժամում որոշելով նրա ճշգրիտ դիրքը՝ այնտեղ բարձրացնում է նորվեգական դրոշը: Երեք օր մնալով՝ անհրաժեշտ դիտարկումներ կատարելուց և ձնե տնակում Ռոբերտ Սքոթին նամակ թողնելուց հետո Ամունդսենի ջոկատը բարեհաջող հետ է վերադառնում:

Ռ. Ամունդսենի արշավախումբը Հարավային բևեռում

Ռոբերտ Սքոթի արշավախումբը այլ ճակատագրի արժանացավ: Արշավախումբը ճանապարհ ընկավ մոտորասահնակներով, տասը ձիով և ընդամենը մեկ շնասահնակով: Մոտորասահնակները շուտով սառույցի մեջ ջարդվեցին, ձիերի ոտքերը վնասվեցին: Սքոթը արշավախմբի մի մասին հրամայում է վերադառնալ, իսկ ինքը չորս ընկերների հետ շարունակում ճանապարհը: Որոշ ժամանակ անց շներն էլ չեն կարողանում շարունակել ճանապարհը, և իրենց վրա կրելով բեռները, դահուկներով դանդաղ շարժվելով՝ 1912թ. հունվարի 17-ին արշավախումբը վերջապես հասավ Հարավային բևեռ: Սակայն, այնտեղ տեսնելով նորվեգական դրոշը և Ամունդսենի ձնե տնակը, նրանք խորը հիասթափություն ապրեցին:

Արշավախմբի վերադարձի ճանապարհը ողբերգական եղավ: Սոված և հյուծված բևեռախույզները մեծ ճիգերով առաջ էին շարժվում: Երբ մնացել էր ընդամենը 20կմ՝ հասնելու իրենց կառուցած մթերքի ու վառելիքի պահեստին, ուժեղ մրրիկ սկսվեց: Սքոթը ընկերների հետ ստիպված կանգ առավ և այլևս չկարողացավ առաջ շարժվել: Փրկարար ջոկատը ութ ամիս հետո գտավ միայն նրանց վրանը և սառած մարմինները:

Հարավային բևեռի նվաճումից հետո մեծ թափով սկսվեց Անտարկտիդայի հետազոտումը: Այստեղ հիմնվեցին տարբեր երկրների կողմից գիտական կայաններ (տես Անտարկտիդայի քարտեզը), որոնք ամբողջ տարին ուսումնասիրում են այս սառցածածկ մայրցամաքի բնության առանձնահատկությունները: Պատկերացնո՞ւմ ես, Անտարկտիդայի ընդերքը ուսումնասիրելիս պարզվել է, որ ժամանակին այս մայրցամաքը ծածկված է եղել փարթամ բուսականությամբ: Դրա մասին են վկայում ընդերքում բույսերի պահպանված մնացորդները:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչո՞ւ է Անտարկտիդան ամենաուշ հայտնաբերված մայրցամաքը:**
2. **Ովքե՞ր և ինչպե՞ս հայտնագործեցին Անտարկտիդան:**
3. **Ինչպե՞ս նվաճվեց Հարավային բևեռը:**
4. **Բնության ինչպիսի՞ առանձնահատկություններ ունի Անտարկտիդան:**

Եվ արդեն գիրքեմ...

Անտարկտիդան հայտնագործել է ռուս ծովագնացներ Ֆ. Ֆ. Բելինսհաուզենի և Մ. Պ. Լազարևի գլխավորած ծովային արշավախումբը՝ 1819-1821թթ. կատարած շուրջերկրյա նավարկության արդյունքում: Հարավային բևեռ առաջինը հասավ նորվեգացի Ռուալ Ամունդսենի գլխավորած արշավախումբը՝ 1911թ. դեկտեմբերի 14-ին, իսկ անգլիացի բևեռախույզ Ռոբերտ Սքոթը իր երեք ընկերների հետ այնտեղ հասավ ավելի քան մեկ ամիս ուշացումով՝ 1912թ. հունվարի 17-ին:

Դաս 48 Շուրջերկրյա ճանապարհորդություններ

Դու արդեն իմացար, որ Կոլումբոսը հայտնագործեց Նոր աշխարհը, սակայն իսպանացիների գլխավոր նպատակը՝ ծովային ուղիով հասնել Հնդկաստան և Չինաստան, մնում էր չիրականացված:

1513 թվականին իսպանացի Բալբոան Կենտրոնական Ամերիկայի հատվածում հայտնագործեց Խաղաղ օվկիանոսը, որին տվեցին Հարավային ծով անվանումը: Այդ ժամանակ դեռ ոչ մի եվրոպացի չէր նավարկել Խաղաղ օվկիանոսի ջրերով: Ավելին, շատերն այն կարծիքին էին, որ նույնիսկ հնարավոր էլ չէ Ատլանտյան օվկիանոսից Հարավային ծով թափանցել:

Եվ ահա, նշանավոր ծովագնաց Ֆերնան Մագելանը համարձակ ծրագիր է առաջարկում Իսպանիայի թագավորին.

«Տվեք ինձ հնարավորություն և ես Իսպանիայի համար Հարավային ծովով կբացեմ կարճ ու անվտանգ ճանապարհ դեպի Չինաստան, Հնդկաստան և Համեմունքի կղզիներ»: Իսպանիայի թագավորն այդ համարձակ առաջարկին հավանություն է տալիս:

Ֆ. Մագելան

1519 թվականի սեպտեմբերի 20-ին Իսպանիայի Սևիլիա նավահանգստից դուրս է գալիս 5 նավից բաղկացած նավախումբ՝ 265 հոգուց բաղկացած անձնակազմով: Արշավախմբի առջևից ընթանում էր Ֆ. Մագելանն իր «Վիկտորիա» նավով: Նավատորմը ուղղություն է վերցնում դեպի Հարավային Ամերիկայի արևելյան ափերը: Մայրցամաքի ափի երկայնքով նրանք շարունակ նավարկում են դեպի հարավ: Շուտով Մագելանի ենթադրությունները լիովին հաստատվում են: Արշավախումբը մայրցամաքի հարավում հայտնաբերում է երկու օվկիանոսներն իրար միացնող նեղուցը, որը հետագայում անվանվում է Մագելանի անունով: 22 օր նավարկելով նեղուցով՝ նավերը դուրս են գալիս լայնարձակ օվկիանոս: Ավելի քան երեք ամիս նավախումբը մեծ օվկիանոսով նավարկում էր. ամբողջ ընթացքում եղանակը հիանալի էր, ծովը՝ խաղաղ, և Մագելանը ջրային այդ հսկա տարածությունն անվանեց **Խաղաղ օվկիանոս**:

Ֆ. Մագելանի «Վիկտորիա» նավը

Ամիսներ տևած նավարկության ընթացքում սպառվում է նավերի վրա եղած սննդամթերքը: Ուժասպառությունից և հիվանդություններից շատերը մահանում են: Իսկ ցանկալի ցամաքը դեռ չէր երևում: Մագելանը համոզված էր, որ առջևում ցամաք կա, հետևաբար նա համառորեն առաջ էր շարժվում:

Վերջապես, 1521 թվականի մարտի 6-ին հուսահատ նավաստիները հեռվում նկատում են ծաղկուն կղզիներ: Կղզիների բնակիչներից վերցնելով սննդամթերքի և ջրի անհրաժեշտ պաշարներ՝ Մագելանի նավախումբը շարունակում է իր ուղին և մի քանի օր հետո հասնում է ասիական առաջին կղզիախմբին՝ Ֆիլիպինյան

կղզիներին: Այստեղ տեղի ունեցած զինված ընդհարումներից մեկի ժամանակ զոհվում են Մագելանը և իր ուղեկիցներից շատերը: Դա 1521թ. ապրիլի 27-ին էր: Սակայն արշավախումբը շարունակում է իր ճանապարհը Էլ Կանոյի գլխավորությամբ. նորանոր դժվարություններ հաղթահարելով՝ 1522թ. սեպտեմբերի 6-ին հասնում է Իսպանիա՝ կատարելով պատմության մեջ **առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունը** (նկ. 52):

Արշավախմբի ողջ կազմից կենդանի են մնում և հայրենիք վերադառնում ընդամենը 18 մարդ՝ մեկ նավով:

Ֆ. Մագելանի պատմական նավարկությունից հետո իրականացվեցին էլի շատ շուրջերկրյա նավարկություններ:

Եթե նայես քարտեզին, ապա կնկատես, որ Մագելանի նեղուցից հարավ՝ Անտարկտիդայի ու Հարավային Ամերիկայի միջև, տարածվում է բավականին լայն մի նեղուց, որը կրում է Դրեյկի անունը: Իսկ ո՞վ է Դրեյկը, և ինչո՞ւ է նեղուցը նրա անունը կրում: Անգլիացի ծովագնաց **Ֆրենսիս Դրեյկին** ժամանակակիցները ծովահեն էին համարում, որովհետև նա հաճախ էր հարձակումներ գործում իսպանական տիրույթների վրա, թալանում իսպանական նավերը: Սակայն նրա կյանքի իսկական նպատակը աշխարհագրական հայտնագործություններն էին, իր հայրենիքին փառք ու ճանաչում բերելը:

Ֆ. Դրեյկ

1577թ. Դրեյկը ձեռնարկում է պատմության մեջ երկրորդ շուրջերկրյա ճանապարհորդությունը՝ համարյա կրկնելով Մագելանի անցած ուղին: Այդ ընթացքում առաջին անգամ նա անցնում է այն նեղուցով, որը հետագայում ստացավ իր անունը: Դրեյկը մի շարք ուսումնասիրություններ կատարեց Ամերիկայի խաղաղօվկիանոսյան ափերին և ավելի քան երկու տարի տևած ճանապարհորդությունից հետո բարեհաջող վերադարձավ Անգլիա: Անգլիայի թագուհին, գոհ մնալով ճանապարհորդության արդյունքներից, Դրեյկին հայտարարեց ազգային հերոս, ձեռնադրեց ասպետ, իսկ հետագայում շնորհեց նաև փոխծովակալի տիտղոս: Վերջինիս նա արժանացավ այն բանից հետո, երբ ջախջախեց իսպանական «Անպարտելի Արմադա» նավատորմը: Իր գործունեությամբ Դրեյկը մեծ փառք ու հարստություններ բերեց Անգլիային:

Ծնբ. Փակագծերում (Սիդնեյ) տրված են ժամանակակից անունները:

Նկ. 52 Ֆ. Մագելանի արշավախմբի շուրջերկրյա ճանապարհորդությունը

18-րդ դարի ամենանշանավոր ծովագնաց-ճանապարհորդը անգլիացի **Ջեյմս Կուկն** է: Պատկերացնո՞ւմ ես, շուրջ 10 տարվա ընթացքում նա երեք շուրջերկրյա նավարկություն է կատարել: Դու արդեն գիտես, որ առաջին նավարկության ժամանակ նա հայտնագործեց Նոր Զելանդիա կղզիները և Ավստրալիայի ափերը: Կուկի երկրորդ ճանապարհորդության նպատակն էր՝ փնտրել եվրոպացիների կողմից վաղուց պատկերացրած «Հարավային անծանոթ ցամաքը»: Այդ արշավանքի ժամանակ հայտնաբերվեցին բազմաթիվ կղզիներ ու կղզիախմբեր Խաղաղ օվկիանոսում, սակայն որոնված մայրցամաքն այդպես էլ չգտնվեց:

Հավայան կղզիների ծովափնյա տեսարան

Շուտով կազմակերպվում է շուրջերկրյա երրորդ ճանապարհորդությունը, որն ավարտվեց Հավայան կղզիների հայտնաբերմամբ, որտեղ էլ Կուկը սպանվեց տեղաբնիկների կողմից: Անգլիայում մեծ ափսոսանքով ընդունեցին խիզախ ծովագնացի մահվան լուրը:

Բոլոր շուրջերկրյա ճանապարհորդությունները ևս ընդլայնեցին մարդկանց ճանաչողության սահմանները:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչ նպատակով իրականացվեց Ֆ. Մագելանի շուրջերկրյա ճանապարհորդությունը:**
2. **Ինչ գիտես Ֆ. Դրեյկի մասին:**
3. **Պատմի՛ր Ջ. Կուկի ճանապարհորդությունների մասին:**
4. **Դասանյութի և այլ ճանապարհորդությունների վերաբերյալ կարդա՛ լրացուցիչ նյութեր և պատմի՛ր ընկերներիդ:**

Եվ արդեն գիտեմ ...

Պատմության մեջ առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունը կատարել է անվանի ու խիզախ ծովագնաց Ֆերնան Մագելանը, երկրորդը՝ անգլի-

ացի ծովագնաց Ֆրենսիս Դրեյկը: Անգլիացի Ջեյմս Կուկը երեք շուրջերկրյա նավարկություն է կատարել:

Շուրջերկրյա ճանապարհորդությունների շնորհիվ մարդիկ շատ ու շատ նոր բաներ իմացան երկրագնդի մասին:

Պատվի առնելու մասին

Խոսքը զինվորական պատվի առնելու մասին է: Այդ սովորույթը գալիս է դարերի խորքից: Մի անգամ, երբ Անգլիայի թագուհին նավ է բարձրանում, Ֆ. Դրեյկը, որ կանգնած էր տախտակամածին, ձեռքի ափը պահում է աչքերի դիմաց՝ չգիտես արևից, թե թագուհու շլացնող գեղեցկությունից աչքերը պաշտպանելու համար: Բայց փաստ է, որ դրանից հետո բարձրաստիճան պաշտոնյաներին զինվորականները դիմավորում են ձեռքը աչքերի դիմաց պահելով՝ պատվի առնելով:

Դաս 49 Ժամանակակից ճանապարհորդություններն օվկիանոսներում

Հին հույները «օվկիանոս» էին անվանում այն միասնական գետը, որը, իրենց պատկերացմամբ, շրջապատում է երկրագունդը բոլոր կողմերից: Եվ օվկիանոսը հնուց ի վեր դեպի իրեն է ձգել մարդկանց՝ իր անսահմանությամբ և խորհրդավորությամբ:

Դու արդեն գիտես այն խոշոր աշխարհագրական հայտնագործությունների մասին, որոնք իրականացվել են հնում՝ ծովային ճանապարհորդությունների շնորհիվ: Մեր օրերում արդեն ծովային ճանապարհորդությունների նպատակը ոչ թե նոր կղզիների, նեղուցների և մայրցամաքների հայտնագործումն է (դրանք բոլորն էլ վաղուց արդեն հայտնագործված են), այլ օվկիանոսների նորովի, մանրամասն և գիտական ուսումնասիրությունները: Դրանք թույլ կտան մարդուն ավելի լավ ճանաչել օվկիանոսը և օգտվել նրա անսահման հարստություններից:

Ներկայումս աշխարհի շատ երկրների ջանքերով ուսումնասիրվում են օվկիանոսների ջրերի հատկանիշները, բուսական

և կենդանական աշխարհը, հանքային հարստությունները, օվկիանոսային ջրերի աղտոտման և դրանց պահպանման խնդիրները:

1960թ. օվկիանոսագետ **Ժակ Պիկարը** «Տրիեստ» բաթիսկաֆով իջավ մինչև աշխարհի ամենախոր՝ Մարիանյան անդունդը (11022մ): Այդ խորություններում անգամ նա հայտնաբերեց կենդանի մանրագույն օրգանիզմներ և ձկներ: Դրանով իսկ հաստատվեց այն միտքը, թե ամբողջ օվկիանոսը լի է կենդանի օրգանիզմներով:

Ժակ Իվ Կուստո

«Կալիպսո» նավը

Ակվալանգ

Մեր ժամանակներում օվկիանոսների ուսումնասիրման գործում իր մեծագույն ավանդն ունի ֆրանսիացի օվկիանոսագետ **Ժակ Իվ Կուստոն**: Նա իր հանրահայտ «Կալիպսո» նավով բազմաթիվ հետազոտություններ է կատարել օվկիանոսներում: Նա հատկապես ուսումնասիրել է օվկիանոսների՝ երբևէ չուսումնասիրված կամ թույլ ուսումնասիրված տեղամասերի ստորջրյա աշխարհը, բացահայտել դրանց աներևակայելի գեղեցկությունը, բույսերի ու կենդանիների արտասովոր ու նոր, զարմանահրաշ տեսակներ: Կուստոն չի անտեսել նաև օվկիանոսներում ցրված հազարավոր կղզիները: Նա հետազոտել է դրանց մի մասի բնությունը, կղզիների հնագույն մշակույթները, բնակիչների կենցաղը, զբաղմունքը, սովորույթները:

Կուստոն **ակվալանգի** գյուտի հեղինակն է: Դրա շնորհիվ հնարավոր դարձան օվկիանոսների ոչ շատ խորը տեղամասերի ստորջրյա հետազոտությունները:

Նայելով Կուստոյի գրած գրքերի պատկերազարդումները, նկարահանած հիանալի ֆիլմերը՝ թվում է, թե նորից վերահայտնագործում ես աշխարհը:



Թ. Հեյերդալ

Նորվեգացի ազգագրագետ և հնէաբան **Թուր Հեյերդալի** մերօրյա օվկիանոսային հետազոտությունները նպատակ ունեին ապացուցելու, որ հնագույն ծովագնացները կարող էին օվկիանոսներով շատ հեռուներ նավարկել և անգամ բնակեցնել օվկիանոսներում ցրված հազարավոր կղզիներից շատերը: Հեյերդալի ուշադրությունը գրավեց այն հանգամանքը, որ Հարավային Ամերիկայի Պերու պետությունում և Խաղաղ օվկիանոսում գտնվող Զատիկի կղզում եղած քարե վիթխարի արձանները շատ նման են միմյանց: Դրանից նա եզրակացրեց, որ կղզու բնակչության նախնիները մոտ 2 հազար տարի առաջ այստեղ են եկել մայրցամաքից: Բացի այդ, կղզու բնակչության հիմնական մթերքը՝ քաղցր կարտոֆիլը, այստեղ կարող էր բերվել միայն Ամազոն գետի ավազանից, որը համարվում է այդ մշակաբույսի հայրենիքը: Չէ՞ որ դրա սերմերը հազարավոր կիլոմետրեր ինքնուրույնաբար տարածվել չէին կարող:

Զատկի կղզու արձանները

Եվ ահա, նա ձեռնարկեց մի համարձակ ծրագիր. կառուցելով «Կոն Տիկի» նավը, որը նման էր հնագույն նավերին՝ նա Պերուից 101 օրում կտրեց-անցավ 8 հազար կիլոմետր ճանապարհ և բարեհաջող հասավ Խաղաղ օվկիանոսի մի շարք կղզիների:

Հետագայում նա պապիրուսից և եղեգնից պատրաստված առագաստանավերով («Ռա» և «Տիգրիս») Աֆրիկայի ափերից հաջողությամբ հասավ մինչև Կենտրոնական Ամերիկա, այնուհետև՝ Իրաք պետությունից մինչև Ինդոս գետի գետաբերան, այնտեղից էլ՝ մինչև Ջի-

բութի պետություն՝ այդ ընթացքում անցնելով վտանգներով ու դժվարություններով լի հազարավոր կիլոմետրեր: Այդ հետազոտությունները նա ներկայացրել է հետաքրքրաշարժ մի շարք գրքերում ու կինոֆիլմերում:

«Կոն Տիկի» նավը

Թ. Հեյերդալի համարձակ նավարկությունները մեկ անգամ ևս ապացուցեցին, որ **հնուց ի վեր օվկիանոսներն ու ծովերը ոչ թե անջատել, այլ միացրել են մարդկանց:**

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչո՞ւ է անհրաժեշտ ուսումնասիրել օվկիանոսը:**
2. **Ի՞նչ գիտես օվկիանոսների ժամանակակից ուսումնասիրությունների մասին:**
3. **Դիտի՛ր Ժակ Իվ Կուստոյի նկարահանած ֆիլմերից, քո տպավորությունները պատմի՛ր ընկերներիդ:**
4. **Ի՞նչ նշանակություն ունեն Թ. Հեյերդալի կողմից Համաշխարհային օվկիանոսի ուսումնասիրությունները:**

Եվ արդեն գիրքեմ ...

Մեր ժամանակներում կատարվող ծովային ճանապարհորդությունների նպատակն է՝ ավելի լավ ճանաչել օվկիանոսը, բացահայտել նրա նորանոր գաղտնիքները, որոնք էլ թույլ կտան լիարժեքորեն օգտվել նրա հարստություններից՝ միաժամանակ պահպանելով այն:

Դաս 50 Ժամանակակից ճանապարհորդությունները տիեզերքում

Քարահունջի աստղադիտարանը

Երրորդ դասարանից գիտես, որ մարդը 1961 թվականից սկսել է տիեզերքի նվաճումը, որն այժմ էլ շարունակվում է տիեզերանավերի, բազմակի օգտագործման աստղագնացների և այլ տիեզերական սարքավորումների միջոցով: Սակայն մարդը մտքով տիեզերքում «ճանապարհորդել» սկսել է շատ դարեր առաջ: Այդ նպատակով նույնիսկ կառուցել է աստղադիտարաններ: Մինչև մեր օրերը հնագույն աստղադիտարանների հետքեր են պահպանվել նաև Հայկական լեռնաշխարհում:

Ժամանակակից ռադիոաստղադիտակների միջոցով հնարավոր է կատարել աստղային երկնքի շուրջօրյա ուսումնասիրություններ և բացահայտել տիեզերքի բազմաթիվ գաղտնիքներ: Այժմ նոր տեսակի ռադիոօպտիկական հայելային աստղադիտակ է տեղադրված Արագածի լանջին, որի հեղինակն է հայազգի ականավոր գիտնական Պարիս Հերունին:

Չնայած տիեզերքն ուսումնասիրող երկրային տեխնիկական միջոցների անընդհատ կատարելագործմանը՝ այնուամենայնիվ նրա գաղտնիքների բացահայտման մեջ անփոխարինելի է տիեզերանավերի միջոցով իրականացվող միջմոլորակային թռիչքների նշանակությունը: Տարիներ տևող այս թռիչքներին մարդն ուղղակի դեռևս չի մասնակցում. դրանք բացառապես իրականացվում են Երկրից կառավարվող տիեզերանավերի միջոցով: Այդ տիեզերանավերը, հաղթահարելով միլիոնավոր կիլոմետրեր, հաջողությամբ վայրէջք են կատարել Մարս և Վեներա մոլորակների վրա:

Իր նշանակությամբ առանձնանում է 2004թ. դեկտեմբերի 4-ին Մարսի վրա վայրէջք կատարած «Սփիրիթ» տիեզերական սարքավորումը, որի օգնությամբ պարզ դարձավ, որ այս մոլորակի վրա գոյություն ունի ջուր: Այստեղ հայտնաբերվեցին աղային նստվածքներ, որոնք նման են Երկրի օվկիանոսներում կուտակված աղերին:



«Սփիրիթ» մարսագնացը Մարսի մակերևույթը

Վեներա մոլորակի ուսումնասիրություններում առանձնանում են «Մագելան» տիեզերական սարքավորման միջոցով կատարված հետազոտությունները: 1992–1993 թվականներին այս սարքավորումը՝ պտտվելով Վեներայի շուրջը, մանրակրկիտ լուսանկարել է նրա մակերևույթը՝ հարստացնելով մինչ այդ Վեներան հետազոտած այլ սարքավորումների՝ Երկիր ուղարկած տվյալները: Այնուհետև «Մագելանի» միջոցով ամբողջական պատկերացում կազմվեց Վեներայի երկրաբանության, նրա մթնոլորտի վերին շերտերի բաղադրության մասին:



«Մագելան» տիեզերական Վեներայի մակերևույթը սարքը

Վերոնշյալ երկու սարքավորումների միջոցով արժեքավոր տվյալներ են հավաքվել հետազոտվող մոլորակների մակերևույթի ու ընդերքի ապարների կազմության, դրանցում կյանքի հնարավոր գոյության մասին:

Տիեզերական տարբեր սարքավորումների միջոցով ուսումնասիրվում են ոչ միայն Արեգակնային համակարգի մոլորակները,

այլև տիեզերական այլ մարմիններ (աստղեր, խոշոր երկնաքարեր), բացահատվում են տիեզերքի շատ գաղտնիքներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչպե՞ս է մարդը ուսումնասիրել տիեզերքը մինչև 20-րդ դարի կեսերը:**
2. **Որո՞նք են տիեզերքի ուսումնասիրության ուղղությամբ ժամանակակից գիտության և տեխնիկայի նվաճումները:**
3. **Ի՞նչ ուսումնասիրություններ են կատարվում Մարս և Վեներա մոլորակների վրա:**
4. **Մտածի՛ր՝ տիեզերքի ի՞նչ նոր գաղտնիքներ կբացահայտեն մարդիկ ապագայում:**

Ես արդեն գիտեմ...

Երկրից տիեզերքը ուսումնասիրվում է աստղադիտարաններում՝ աստղադիտակների միջոցով: Տիեզերանավերի օգնությամբ ոչ միայն ուսումնասիրվում են տիեզերքի գաղտնիքները, այլև Երկրին մոտ գտնվող մոլորակները:

Հնագույն աստղադիտարանները

Սթոունհենջ

Աստղադիտարաններ գոյություն են ունեցել դեռևս հին աշխարհում մի քանի հազարամյակ առաջ՝ Բաբելոնում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Մեքսիկայում: Գիտնականներն ապացուցել են, որ Հայաստանում մեզանից 7500 տարի առաջ գործել է Քարահունջի, իսկ 5000 տարի առաջ՝ Մեծամորի աստղադիտարանները: Ավելի քան 4500 տարի առաջ ժամանակակից Մեծ Բրիտանիայի տարածքում կառուցվել է Սթոունհենջը, որն օգտագործվել է նաև որպես աստղադիտարան: Կարծիք կա, որ որպես աստղադիտարան են գործել նաև եգիպտական բուրգերը:

Ըստ «Դպրոցական հանրագիտարանի»

Դաս 51 Հարցեր և առաջադրանքներ «Տեղանքի հետազոտում: Ճանապարհորդություններ և աշխարհագրական հայտնագործություններ» գլխի կրկնության համար

1. Որո՞նք են հորիզոնի հիմնական և միջանկյալ կողմերը: Խմբերով քննարկե՛ք անծանոթ տեղանքում տեղային առարկաներով կողմնորոշվելու երկու եղանակ:
2. Ի՞նչ ճանապարհորդություններ է կատարել մարդը վաղ անցյալում և ինչպե՞ս է արձանագրել դրանց արդյունքները:
3. Ի՞նչն է նպաստել դեպի Չինաստան և Հնդկաստան ճանապարհորդություններին: Ինչպե՞ս են դրանք իրականացվել:
4. Ովքե՞ր և ինչպե՞ս են իրականացրել Ամերիկայի, Ավստրալիայի, Անտարկտիդայի հայտնագործումը և Աֆրիկայի ներքին շրջանների հետազոտումը: Ի՞նչն է նպաստել դրանց հայտնագործմանն ու հետազոտմանը:
5. Որո՞նք են շուրջերկրյա ճանապարհորդությունների նշանակությունը երկրագնդի ուսումնասիրության գործում:
6. Ինչպիսի՞ հետազոտություններ են կատարվում Համաշխարհային օվկիանոսում և տիեզերքում: Մարդկության համար ի՞նչ նոր հեռանկարներ են բացում այդ հետազոտությունները:
7. Տետրում արտագծի՛ր աղյուսակը և յուրաքանչյուր սյունակում լրացրո՛ւ ստորև բերված ցանկից տվյալ աշխարհամասի հետ կապված անվանումները.

Աֆրիկա	Ամերիկա	Ավստրալիա և Օվկիանիա	Անտարկտիդա

կենգուրու, Դ. Լիվինգստոն, շնասահնակ, Կուբա կղզի, Հարավային բևեռ, Վիկտորիա ջրվեժ, հնդկացի, Մ. Լազարև, ծխախոտ, Նոր Զելանդիա, Զամբեզի գետ, Սահարա անապատ, կոալա, Ռ. Ամունդսեն, կարտոֆիլ, Թանա լիճ, էվկալիպտ, Նեղոս գետ

Դաս 52 Իրավունք և պարտականություն

Մարդիկ միշտ արդարության են ձգտել: Մտածել են՝ ինչ անեն, որպեսզի յուրաքանչյուր մարդու և ամբողջ հասարակության շահերը համընկնեն, ստեղծվեն այնպիսի օրենքներ, որոնք կծառայեն և՛ ամբողջ հասարակությանը, և՛ հասարակության յուրաքանչյուր անդամին: Օրենքները կարգավորում են մեր կյանքը, ծառայում են մեզ: Այդ պատճառով էլ դրանք պարտադիր են բոլորի համար, մենք էլ մեր հերթին պետք է լավ իմանանք օրենքները և հետևենք դրանց: Այդ պահանջը վերաբերում է բոլորին՝ շարքային քաղաքացուց մինչև երկրի նախագահին: Ոչ ոք չի կարող օրենքից բարձր լինել:

Ամեն երկիր ունի իր հիմնական օրենքը: Դա Սահմանադրությունն է:

Բոլոր օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Հայաստանի Հանրապետությունը, ինչպես աշխարհի այլ պետություններ, ստեղծել է իր **Սահմանադրությունը**: Բոլորիս պարտքն է հարգել և ընդունել Սահմանադրության պահանջները:

Հայաստանի Ազգային ժողովի շենքը. այստեղ են մշակվում և ընդունվում մեր երկրի օրենքները:

Մեզանից յուրաքանչյուրն ունի **իրավունքներ**: Այդ իրավունքները կոչվում են մարդու իրավունքներ: Դրանք մեզ ոչ ոք չի նվիրել և ոչ ոք իրավունք չունի մեզանից խլելու: Մենք այդ իրավունքները պարզապես ունենք մեր ծննդյան օրից: Օրինակ՝ յուրաքանչյուրս ունենք կյանքի, ազատության, բարեկեցության, կրթության, աշխատանքի և շատ ու շատ այլ իրավունքներ: Սակայն, երբ ասում ենք, թե յուրաքանչյուր մարդ ունի իրավունքներ, պետք է հիշել, որ ունի նաև **պարտականություններ**: Օրինակ՝ չափահաս մարդու համար պարտականություն է իր անաշխատունակ և կարիքավոր ծնողներին օգնելը, կամ ծնողները պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության և կրթության համար:

Պետք է հիշենք նաև շատ կարևոր մի հանգամանք. **մեր իրավունքներն ու պարտականությունները փոխկապակցված են:** Բերենք մի օրինակ՝ մեզանից յուրաքանչյուրը ոչ միայն **իրավունք ունի** հարգալից վերաբերմունքի, այլև **պարտավոր է** հարգել ուրիշներին: Կամ՝ կրթություն ստանալը մեր **իրավունքն** է, բայց այն միաժամանակ նաև **պարտականություն** է: Մենք պարտավոր ենք ամեն օր գնալ դասի, սովորել դասերը, պահպանել դպրոցում ընդունված կարգուկանոնը:

Այսպիսով՝ մենք ունենք տարբեր պարտականություններ, բայց դրանցից **ամենակարևորը ուրիշների իրավունքները հարգելու պարտականությունն է: Միայն այդ դեպքում մենք կարող ենք պահանջել, որ ուրիշներն էլ հարգեն մեր իրավունքները:**

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ի՞նչ դեր ունեն օրենքները մեր կյանքում:**
2. **Ո՞րն է մեր երկրի գլխավոր օրենքը:**
3. **Թվարկի՛ր մի քանի իրավունք և պարտականություն:**
4. **Ի՞նչ իրավունքներ և պարտականություններ ունես դու:**

Ես արդեն գիտեմ...

Օրենքները կարգավորում են մեր կյանքը, ծառայում են մեզ, դրանք պարտադիր են բոլորի համար: Սահմանադրությունը մեր երկրի հիմնական օրենքն է: Մեզանից յուրաքանչյուրն ունի իրավունքներ: Մեր իրավունքներն ու պարտականությունները փոխկապակցված են:

Դաս 53 Ժողովրդավարական հասարակություն

Ժողովրդավարություն (դեմոկրատիա) բառը ծագել է հունարեն **դեմոս** (ժողովուրդ) և **կրատոս** (իշխանություն) բառերից: Ժողովրդավարությունը երկիրը կառավարելու այնպիսի ձև է, որի դեպքում ժողովրդի դերը շատ մեծ է: Օրինակ՝ երբ երկիրը կառավարվում է ոչ թե մեկ անձի՝ թագավորի, կայսրի, իշխանի, այլ ժողովրդի (քաղաքացիների) կողմից: Ժողովրդավարություն ասելով՝ հասկանում ենք, որ ժողովուրդն է որոշում, թե ով և ինչպես պետք է կառավարի երկիրը: Այդ կապակցությամբ կա հայտնի մի ձևակերպում, ըստ որի՝ **ժողովրդավարություն** նշանակում է՝ **«Ժողովրդի կառավարում ժողովրդի կողմից և ժողովրդի համար»:**

Ժողովրդավարական պետությունը կարելի է համեմատել մի նավի հետ, որտեղ նավապետը, այսինքն՝ կառավարությունը, ընտրվում է ուղևորների կողմից՝ նավը ղեկավարելու և ուղղորդելու համար: Բոլոր ուղևորները հուսով են, որ իրենց ընտրած նավավարը ճիշտ ուղով կտանի նավը, ճանապարհորդությունը կլինի ապահով և անվտանգ: Իսկ պարտականությունները չկատարե-

լու, ուղևորների հույսերն ու սպասելիքները չարդարացնելու դեպքում նավավարը (կառավարությունը) պետք է հրաժարական տա:

Մարդկության պատմության մեջ ժողովրդավարական հասարակությունների բազմաթիվ օրինակներ են եղել: Դրանցից կարելի է հիշատակել Հին Հունաստանի, ավելի ճիշտ՝ Հին Աթենքի օրինակը: Այնտեղ ժողովրդավարությունն իրականացվում էր անմիջականորեն ժողովրդական հավաքների միջոցով: Աթենքի քաղաքացիները հավաքվում էին քաղաքի կենտրոնում՝ շուկայի հրապարակում, և քննարկում Աթենքի համար կարևոր նշանակություն ունեցող հարցեր: Այդ քննարկումների արդյունքում ընդունված որոշումները դառնում էին օրենք բոլորի համար:

Մեր ժողովրդի պատմության մեջ ևս կան ժողովրդավարության օրինակներ: Հին Հայաստանում, երբ անհրաժեշտ էր լինում, հայոց թագավորի պահանջով հավաքվում էին նախարարները, բարձր հոգևորականության, գյուղերի ու քաղաքների բնակչության ներկայացուցիչները և համատեղ քննարկում երկրի համար շատ կարևոր հարցեր: Դա կարող էր լինել, օրինակ, հոգևոր առաջնորդի ընտրությունը, բոլորի համար պարտադիր կանոնների սահմանումը և այլն: Այդպիսի հավաքներն անվանում էին **աշխարհաժողով**: Սովորաբար աշխարհաժողով հրավիրվում էր ամռանը՝ օգոստոս ամսին, երբ հայերը նշում էին Նոր տարին՝ Նավասարդը: Հենց այդ ժամանակ էլ տեղի էին ունենում հայտնի Նավասարդյան խաղերը:

Աթենքի քաղաքացիների ժողովը

Այսպիսով՝ ժողովրդավարությունը երկիրը կառավարելու մի ձև է, որի դեպքում այդ երկրի ժողովուրդն է որոշում, թե ինչպես կառավարեն իրեն: Ժողովուրդն է նաև որոշում, թե ով պետք է իրեն կառավարի:

Հայկական աշխարհաժողովը

Մեր երկիրը՝ Հայաստանի Հանրապետությունը, ժողովրդավարական պե-

տություն է: Այդ մասին գրված է մեր երկրի գլխավոր օրենքի՝ Սահմանադրության մեջ: Սահմանադրության 1-ին հոդվածում նշված է. «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: Իսկ 2-րդ հոդվածում ասվում է. «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին»:

Այսպիսով՝ մեր երկիրը կարևորում է ժողովրդավարությունը և ցանկանում է զարգանալ այդ ուղով:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ի՞նչ է նշանակում ժողովրդավարություն:**
2. **Ինչո՞ւ են ժողովրդավարական պետությունը համեմատում նավի հետ:**
3. **Ինչպե՞ս էր իրականացվում ժողովրդավարությունը Հին Աթենքում:**
4. **Հայոց պատմության մեջ ժողովրդավարության ի՞նչ օրինակ գիտես:**

Ես արդեն գիտեմ...

Ժողովրդավարությունը երկիրը կառավարելու այնպիսի ձև է, որի դեպքում ժողովրդի դերը շատ մեծ է: Ժողովրդավարություն նշանակում է՝ «Ժողովրդի կառավարում ժողովրդի կողմից և ժողովրդի համար»:

Դաս 54-55 Իրավունքների շուրջ ծագած հակամարտություններ

Նախորդ դասերից իմացանք, որ յուրաքանչյուրն ունի իրավունքներ և պարտականություններ: Բայց երբեմն լինում են իրավիճակներ, երբ մարդկանց իրավունքները բախվում են: Այդպիսի բախումներ դու տեսնում ես այս նկարներում:

Մի պահ պատկերացրո՛ւ, թե դու իմաստուն դատավոր ես, յուրաքանչյուր դեպքի համար առաջարկի՛ր մի լուծում:

Մեր կյանքում հաճախ են բախումներ, վիճելի իրավիճակներ ստեղծվում, սակայն միշտ էլ կարելի է գտնել դրանցից դուրս գալու տարբեր եղանակներ: Այդպիսի մի իրավիճակ է նկարագրված Հ. Թումանյանի «Ոսկու կարասը» հեքիաթում:

«Մի ժամանակ մի աղքատ հողագործ է լինում, ունենում է մի օրավար հող ու մի լուծ եզ: Ձմեռը էս աղքատ հողագործի եզները սատկում են: Գարնանը հողը վարձով տալիս է հարևանին: Էս հարևանի վարելու ժամանակ դուրս է գալիս մի կարաս՝ մեջը լիքը ոսկի: Եզները լծած թողնում է, վազում հողատիրոջ մոտ:

– Հեյ, աչքդ լույս, քո հողում մի կարաս ոսկի դուրս եկավ, արի տար:

– Չէ՛, ախպեր, էդ իմը չի,– պատասխանում է հողատերը,– հողի վարձը դու տվել ես, էն հողում ինչ էլ դուրս գա, քոնն է: Սկսում են վիճել. սա ասում է՝ քոնն է, նա թե չէ՝ քոնը: Վեճը տաքանում է, իրար ծեծում են: Գնում են թագավորի մոտ գանգատ:

1. Ոսկին գտնող գյուղացու փոխարեն դու ինչպե՞ս կվարվեիր: Ինչո՞ւ:

2. Քո կարծիքով՝ ինչպե՞ս կվարվի թագավորը:

Թագավորը մի կարաս ոսկու անունը լսում է թե չէ՝ աչքերը չորս է բաց անում և ասում է.

– Ոչ քոնն է, ոչ դրանը, իմ հողում կարասով ոսկի է դուրս եկել, իմն է: Իր մարդկանցով գնում է, որ հանի բերի: Գնում է տեսնում՝ ի՞նչ ոսկի, կարասը լիքը օձ... Զարհուրած ու կատաղած հետ է գալիս: Հրամայում է պատժել անգետ ռանչպարներին, որ համարձակվել են իրեն խաբել:

– Չէ՛, թագավորն ապրած կենա, մեզ ինչո՞ւ ես սպանում. օձ չկա էնտեղ, ոսկի է, ոսկի...

Թագավորը նոր մարդիկ է ուղարկում, որ գնան ստուգեն: Մարդիկ գնում են, ետ գալիս, թե՝ ճշմարիտ, ոսկի է:

– Վա՜հ,– զարմանում է թագավորը: Վեր է կենում մին էլ գնում: Կարասը բաց է անում, դարձյալ մեջը լիքը օձ: Թագավորը հրամայում է իր երկրի իմաստուններին բացատրել, թե ինչ հրաշք է սա:

1. Ինչպե՞ս կգնահատես թագավորի որոշումը:

2. Ինչո՞ւ է կարասի մեջ եղած ոսկին թագավորի աչքին օձ երևում:

3. Քո կարծիքով՝ ի՞նչ պատասխան կտան իմաստունները:

– Կարասով ոսկին աղքատ հողագործներին պարգև է ուղարկված իրենց արդար աշխատանքի համար,– ասում են իմաստունները:– Երբ որ նրանք են գնում, իրենց արդար վարձին են գնում ու ոսկի գտնում, իսկ երբ որ դու ես գնում, գնում ես ուրիշի բախտը հափշտակես, դրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում: Թագավորը ցնցվում է, խոսք չի գտնում պատասխանելու:

– Լա՜վ,– ասում է,– դե հիմի էն որոշե՛ք, թե էդ երկուսից ո՞րին է պատկանում գտած ոսկին:

– Իհարկե հողատիրոջը,– ձայն է տալիս վարող գյուղացին:

– Չէ, վարողինն է,– մեջ է մտնում հողատերը:

Ու նորից սկսում են կռվել:

Ի՞նչ ես կարծում ինչպե՞ս կլուծվի այս վեճը:

– Լա՜վ, լա՜վ, կացե՛ք,– կանգնեցնում են իմաստունները,– ի՞նչ ունեք դուք՝ տղա կամ աղջիկ:

Դուրս է գալիս, որ մեկը մի տղա ունի, մյուսը՝ մի աղջիկ: Վճռում են, որ սրանք իրենց աղջիկն ու տղեն իրար հետ պսակեն, էն գտած ոսկին էլ տան նրանց: Համաձայնում են

բարի մարդիկ, յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում, կարասով ոսկին էլ տալիս են իրենց զավակներին:

Քեզ դուր եկա՞վ իմաստունների առաջարկած լուծումը: Ինչո՞ւ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշի՛ր մի քանի դեպք, երբ քո շրջապատի մարդկանց իրավունքները բախվել են: Ինչպե՞ս են դրանք լուծվել:

2. Հեքիաթի ո՞ր դրվագը քեզ ամենաշատը դուր եկավ: Ինչո՞ւ:

Եվ արդեն գիրքեմ...

Մեր կյանքում հաճախ են բախումներ, վիճելի իրավիճակներ ստեղծվում, սակայն միշտ էլ կարելի է գտնել դրանցից դուրս գալու տարբեր եղանակներ:

Դաս 56 Ինչպես ճիշտ հաղորդակցվել

Ուշադի՛ր նայիր այս նկարները և կտեսնես երեք տարբեր իրավիճակ: Առաջին դեպքում երկու տղա կռվում են իրար հետ: Երկրորդ նկարում աղջիկներից մեկը տորթի իր կտորը չի ցանկանում կիսել ընկերուհիների հետ՝ պատճառաբանելով, որ այն ընդամենը մի կտոր է: Իսկ երրորդ նկարում աղջիկը հրաշալի ելք է գտել. նա երեք մասի է բաժանել տորթի կտորը, և բոլորն էլ գոհ են մնացել:

Բոլոր երեք իրավիճակներում էլ պատկերված երեխաները իրար հետ հաղորդակցվում են: Հաղորդակցվելը, շփվելը մարդու ամենակարևոր կարողություններից մեկն է: Այն շատ անհրաժեշտ է մարդկանց, քանի որ մարդը չի կարող անընդհատ մենակ

լինել: Օրինակ՝ մենք բոլորս օրվա ընթացքում տարբեր մարդկանց հետ ենք շփվում և հաղորդակցվում: Մենք մեծ սիրով շփվում ենք մեր ընկերների, ընկերուհիների հետ, զրուցում ենք նրանց հետ, խաղում, ֆիլմեր դիտում: Մեզ համար շատ հետաքրքիր է ոչ միայն պարզապես շփումը մեր ընկերների հետ, այլև նրանց կարծիքը, վերաբերմունքը, մոտեցումները:

Ընկերական շփումներից բացի մենք ամեն օր շփվում ենք մեր հարազատների՝ հայրիկի, մայրիկի, տատիկների, պապիկների և ուրիշների հետ: Դա մեր ընտանիքն է՝ ամենահարազատ, ամենաապահով ու ամենասիրելի միջավայրը:

Ընկերներից ու հարազատներից բացի մենք էլի շատ մարդկանց հետ ենք շփվում: Օրինակ՝ ուսուցիչների, բժիշկների, վաճառողների և շատ ուրիշների: **Շարունակի՛ր թվարկել, թե էլ ո՞ւմ հետ ես դու շփվում:**

Այսպիսի շփումները տարբերվում են ընկերների կամ հարազատների հետ մեր ունեցած շփումից: Այս դեպքում մենք պետք է փոքր-ինչ զուսպ լինենք:

Այսպիսով՝ օրվա ընթացքում մենք տարբեր մարդկանց հետ ենք հաղորդակցվում: Այն, որ մենք ունենք հաղորդակցվելու հնարավորություն, դա մեծագույն հարստություն է և ուրախություն: Սակայն անհրաժեշտ է նաև պահպանել այդ հարստությունը: Ամենափոքր սխալի դեպքում մենք կարող ենք զրկվել դրանից: Միշտ պետք է հիշել, որ հաղորդակցությունը արվեստ է, իսկ այդ արվեստին տիրապետելու համար պետք է սովորել: Պետք է անպայման իմանալ և կիրառել մի քանի շատ կարևոր կանոններ, որոնք կօգնեն քեզ ճիշտ հաղորդակցվել:

Հիշի՛ր՝

- **միշտ պետք է փորձել հասկանալ դիմացինին, կարողանալ լսել նրան,**
- **պետք է փորձել հոգ տանել դիմացինի մասին,**
- **ցանկացած հարաբերություններում պետք է լինել անկեղծ, չի կարելի սուտ խոսել,**

- **միշտ պետք է հարգել դիմացինի կարծիքը. յուրաքանչյուր մարդ իր կարծիքն ունենալու իրավունք ունի,**
- **պետք է նաև հիշել, որ դիմացինի հետ պետք է վարվել այնպես, ինչպես կցանկանայիր, որ քեզ հետ վարվեն:**

Հարցեր և առաջադրանքներ

1. **Մարդու համար ի՞նչ նշանակություն ունի հաղորդակցությունը:**
2. **Ի՞նչ է անհրաժեշտ ճիշտ հաղորդակցվելու համար:**
3. **Փոքր խմբերով քննարկե՛ք և ճիշտ հաղորդակցության կանոններ սահմանե՛ք:**

Ես արդեն գիտեմ...

Հաղորդակցվելը, շփվելը մարդու ամենակարևոր կարողություններից մեկն է: Ճիշտ հաղորդակցվելու համար անհրաժեշտ է հետևել մի շարք կանոնների:

Դաս 57 Կարծրացած ընկալումներ: Հանդուրժողականություն

Դու հավանաբար հաճախ ես լսել, թե ինչպես են մարդիկ այս կամ այն բանի մասին խոսելիս համոզված կարծիքներ հայտնում, որոնք կարող են ճիշտ չլինել: Օրինակ՝ «Բոլոր վանեցիները ժլատ են», «Բոլոր ակնոց կրողները խելացի են» կամ «Բոլոր գերմանացիները ճշտապահ են»: Այսպիսի պատկերացումներն այնքան են արմատացել մարդկանց մեջ, որ երբեմն նրանք այդ ամենը համարում են անվիճելի ճշմարտություններ: **Իսկ դու ի՞նչ ես մտածում այդ մասին: Դո՞ւ էլ ես այդպես կարծում:**

Իհարկե, պարզ է, որ դա այդպես չէ. այսինքն՝ բոլոր ակնոց կրողները չէ, որ անպայման խելացի կամ տաղանդավոր մարդիկ են կամ բոլոր վանեցիները չէ, որ ժլատ են: Սակայն այդ կարծիքները այնքան են կայունացած, կարծրացած, որ երբեմն անիմաստ է դրանք վիճարկելը:

Այդպիսի կարծիքները անվանում են **կարծրատիպեր**: Դրանք ինքնին այդքան էլ վտանգավոր չեն, բայց հաճախ կարող են խանգարել մարդկանց միջև ներդաշնակ հարաբերությունների կայացմանը, քանի որ կարծրատիպի ազդեցությամբ կարող ենք կարծիք հայտնել մարդու մասին՝ առանց նրան լավ ճանաչելու: Կարող ենք նաև մարդուն վիրավորող **պիտակներ** կպցնել, օրինակ՝ «միամիտ լոռեցի», «ժլատ վանեցի» և այլն: Մարդիկ տարբեր են ոչ միայն իրենց բնավորությամբ, ծննդավայրին բնորոշ հատկանիշներով, այլև մաշկի գույնով, լեզվով, կրոնով, ազգությամբ: Բայց այս ամենը չպետք է հիմք հանդիսանա, որ մենք մարդու այս կամ այն հատկանիշը նախապես համարենք մեզ համար անընդունելի՝ առանց նրան ճանաչելու, և առավել ևս նրան դարձնենք ծաղրի առարկա:

Նկարներում պատկերված են մարդիկ: Նրանք իրար նման են, բայցև ունեն շատ տարբերություններ. իրարից տարբերվում են մաշկի գույնով, աչքերի, քթի ձևով, հագուստով և այլն: Ճիշտ է, սրանք տարբերություններ են, սակայն դրանք չեն խանգարում, որ նկարում պատկերված մարդիկ լավ ընկերներ լինեն: Մարդկանց միջև եղած տարբերությունների պատճառով չի կարելի նրանց ծաղրել, պիտակներ կպցնել: Այդպես է նաև քո շրջապատում, օրինակ՝ դասարանում: Քո կողքին նստած տղան կամ աղջիկը, անշուշտ, շատ հատկանիշներով տարբերվում է քեզանից: Նրա հագուստը, սանրվածքը, մտածելակերպը պարտադիր չէ, որ նման լինեն քոնին:

Չնայած այս ամենին՝ դուք էլի շարունակում եք ընկերներ մնալ: Միայն այն պատճառով, որ ընկերդ այնպես չի հագնվում, այնպես չի մտածում, ինչպես դու, ձեր ընկերությունը չպետք է տուժի: Այսինքն՝ մեզանից յուրաքանչյուրը պետք է հարգի դիմացինի, ընկերոջ ճաշակը, կարծիքը, մտածելակերպը, սովորույթները: Ուրիշի նկատմամբ այդպիսի վերաբերմունքը, մտածելակերպը, դիրքորոշումը անվանում են **հանդուրժողականություն**: Հանդուրժել նաև նշանակում է ընդունել ուրիշի՝ քեզանից տարբերվելու իրավունքը:

Եկեք հանդուրժող լինենք:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչ է կարծրատիպը, և ինչ վնասներ այն կարող է պատճառել մարդկանց:**
2. **Ինչը կարող է դառնալ կարծրատիպերի առաջացման պատճառ:**
3. **Ինչո՞ւ է անհրաժեշտ լինել հանդուրժող:**
4. **Մտաբերի՛ր մի դեպք քո կյանքից, երբ դու հանդուրժող ես եղել, երբ հանդուրժող են եղել քո նկատմամբ:**

Ես արդեն գիտեմ...

Կայունացած, կարծրացած կարծիքները անվանում են կարծրատիպեր: Մեզանից յուրաքանչյուրը պետք է հարգի դիմացինի, ընկերոջ ճաշակը, կարծիքը, մտածելակերպը, սովորույթները: Դա հանդուրժողականությունն է:

Դաս 58 Փոփոխությունները մարդու կյանքում

Բոլոր մարդկանց՝ և մեծերի, և փոքրերի կյանքում տարբեր փոփոխություններ են լինում: Այդ փոփոխությունները կարող են կապված լինել մեր այս կամ այն գործողության, ճիշտ ու սխալ արարքի, մի խոսքով՝ վարքագծի հետ: Բայց հիմնականում կարևոր է մեր մտածելակերպի փոփոխությունը: Այսինքն՝ պետք

է կարողանալ, երբեմն՝ անգամ համարձակություն ունենալ և խոստովանել սեփական սխալները: Ապա պետք է կարողանալ դրանցից դասեր քաղել և փոխել մտածողությունն ու վերաբերմունքը: Ասենք, դու անտեղի վիրավորել ես ընկերոջդ, հետո հասկացել ես սխալդ և ներողություն խնդրել: Դրանից հետո քո բնավորության մեջ արդյոք որոշակի փոփոխությո՞ւն է եղել, և դու փորձե՞լ ես ավելի զուսպ և ներողամիտ լինել:

Ինձ այսպես է դուր գալիս:

Ինձ էլ այսպես է դուր գալիս:

Հնարավոր են նաև փոփոխության այլ պատճառներ: Օրինակ՝ փոքրիկ Դավիթը շարունակ սուտ էր խոսում: Մի անգամ նրա հերթական սուտը «բռնվեց»: Դավիթը անզգուշորեն կոտրել էր մայրիկի սիրելի սափորը և մեղքը գցել փիսիկի վրա: Մայրիկը զայրացավ և սպառնաց, որ կվռնդի փիսիկին: Դավիթն իրեն շատ վատ զգաց. իր ստի պատճառով խեղճ փիսիկը պետք է պատժվեր: Դավիթը խոստովանեց իր արածը: Նա հասկացավ, որ ավելի լավ է ճիշտը ասել, քան մեղքն ուրիշի վրա գցել: Այս դեպքից հետո Դավիթը կարծես փոխվեց. նա փորձում էր այլևս սուտ չխոսել:

Կարող է փոփոխվել նաև մարդու վերաբերմունքը մեկ ուրիշի նկատմամբ: Օրինակ՝ դպրոցում հանկարծակի բռնկված հրդեհի ժամանակ տղաներից մեկը, որին բոլորը վախկոտ էին համարում, հանկարծ անսպասելի խիզախություն հանդես բերեց՝ հանգցնելով հրդեհը: Դրանից հետո այլևս ոչ ոք նրան վախկոտ չէր համարում. փոխվեց վերաբերմունքը մարդու նկատմամբ:

Այսպիսով՝ մեր կյանքում կատարվող իրադարձությունները, դեպքերը հաճախ կարող են այնպիսի շրջադարձային իրավիճակ ստեղծել, որը մեզ կստիպի փոխել մեր վերաբերմունքը, կարծիքը, անգամ՝ բնավորությունը:

Ուշադի՛ր դիտիր նկարների շարքը և ասա՛, թե ինչ փոփոխություններ կարող են կատարվել երեխաների կյանքում:



Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ պատահեց փոքրիկ Դավթի հետ, երբ նա սուտ խոսեց:
2. Եղե՞լ է այնպես, որ խոստովանել ես սխալդ. ի՞նչ փոփոխություն է կատարվել քո կյանքում դրանից հետո:
3. Ինչի՞ հետ կարող են կապված լինել փոփոխությունները:

Ես արդեն գիտեմ...

Մեր կյանքում կատարվող իրադարձությունները, դեպքերը հաճախ կարող են այնպիսի իրավիճակ ստեղծել, որը մեզ կստիպի փոխել մեր վերաբերմունքը, կարծիքը, անգամ՝ բնավորությունը:

Դաս 59 Մենք և ապագան

Դու հավանաբար հաճախ ես մտածում. «Տեսնես՝ ինչ կլինի տասը կամ քսան տարի հետո»: Դա զարմանալի չէ. մարդիկ միշտ էլ մտածում են ապագայի մասին: Ապագան միայն երազանք չէ: Թե ինչպիսին կլինի այն, կախված է նաև մեզանից յուրաքանչյուրի այսօրվա լավ ու վատ քայլերից, արարքներից, գործողություններից:

Չինական այսպիսի մի ասացվածք կա. «Ամենաերկար ճանապարհն էլ սկսվում է առաջին քայլերից»: Քո կյանքի երկար ճանապարհը դեռ առջևում է, դու հիմա փաստորեն քո առաջին քայլերն ես անում: Ինչպիսին լինեն այդ քայլերդ, այդպիսին էլ կլինի քո հետագա ճանապարհը: Պատկերացրու, որ դու ցանկանում ես օդաչու դառնալ: Դրա համար դու արդեն այսօրվանից պետք է մտածես այդ մասին և հիշես, որ քո ցանկացած քայլը քեզ մոտեցնում կամ հեռացնում է քո նպատակից: Իսկ եթե դու սպորտով չես զբաղվում, լավ չես սնվում, չես սովորում, ապա ապագայում դժվարություններ կունենաս, անգամ հնարավոր է, որ չհասնես նպատակիդ:

Հնարավոր է, որ մեր նպատակները փոխվեն, սակայն նույնիսկ այդ դեպքում մեր կատարած քայլերը (ճիշտ սնվելը, մարզվելը, սովորելը և այլն) ապագայում մեզ համար օգտակար կլինեն: Քո կյանքի ճանապարհին դու մենակ չես, քո կողքին են ծնողներդ, հարազատներդ, ընկերներդ: Կարևոր քայլեր կատարելիս միշտ պետք է խորհրդակցել այդ մարդկանց հետ, որովհետև նրանք, հատկապես ծնողներդ, քեզ անպայման արժեքավոր խորհուրդներ կտան:

Դու, անշուշտ, հեքիաթներում կարդացել ես, թե ինչպես է հերոսը կանգնում ճանապարհների խաչմերուկում և փորձում ընտրություն կատարել, թե որ ուղղությամբ գնալն է ճիշտ: Հնարավոր է, որ դու էլ կյանքիդ ընթացքում կանգնես այդպիսի ընտրության առջև: Միշտ հիշի՛ր, որ չնայած այն հանգամանքին, որ քո կողքին կլինեն շատ ընկերներ, հարազատներ, բարեկամներ, հիմնականում քո ապագայի ընտրությունը հենց քո ձեռքերում է: Դրա համար այսօրվանից փորձի՛ր լինել աշխատասեր, կարգապահ, հաստատակամ, ճշմարտասեր, արդարամիտ, առողջ... **Շարունակի՛ր թվարկել:**

Սիրելի՛ բարեկամ, քեզ շատ երկար, հետաքրքիր և լուսավոր կյանք է սպասում: Այդ ճանապարհին քեզ ազակից կլինի նաև այն ամենը, ինչ դու ձեռք բերեցիր այս դասընթացից:

Հաջողությո՛ւն քեզ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ են մարդիկ մտածում ապագայի մասին:
2. Քո կարծիքով՝ ինչ պետք է անես դու այսօր՝ լավ ապագա ունենալու համար:
3. Ինչպիսի՞ ապագա ես ցանկանում ունենալ:

Ես արդեն գիտեմ....

Թե ինչպիսին կլինի մեր ապագան, կախված է նաև մեզանից, յուրաքանչյուրիս այսօրվա լավ ու վատ քայլերից, արարքներից, գործողություններից: Քո ապագայի ընտրությունը ավելի շատ քո ձեռքերում է:

Դաս 60 Կրկնություն

1. Ինչ դեր ունեն օրենքները մեր կյանքում: Ո՞րն է մեր երկրի գլխավոր օրենքը:
2. Ինչ է նշանակում ժողովրդավարություն: Ժողովրդավարության ինչ օրինակներ գիտես:
3. Հ. Թումանյանի «Ոսկու կարասը» հեքիաթից առանձնացրո՛ւ դրվագներ, որտեղ վիճելի իրավիճակ է ստեղծված և պատմի՛ր, թե դրանք ինչպես լուծվեցին:
4. Ինչ է մեզ անհրաժեշտ ճիշտ հաղորդակցվելու համար:
5. Ինչ է կարծրատիպը, և ինչը կարող է դառնալ կարծրատիպերի առաջացման պատճառ:
6. Ինչի՞ հետ են սովորաբար կապված լինում փոփոխությունները մարդու կյանքում: Ինչ ազդեցություն կարող են դրանք ունենալ:
7. Ինչ պետք է անել՝ լավ ապագա ունենալու համար: Իսկ դու ինքդ ինչ պետք է անես դրա համար:
8. Դասընկերներով փորձեք սահմանել օրենքներ, որոնցով կուզենայիք առաջնորդվել դպրոցում, դասարանում, տանը, համայնքում և այլն: Ինչ իրավունքներ և պարտականություններ կավելացնեիք եղածներին:

Դաս 61-62 Ես արդեն գիտեմ (Ամփոփում)

- Երկիր մոլորակի բնությունը կազմված է տարբեր բաղադրամասերից, որոնք փոխադարձորեն կապված են միմյանց:
- Երկրագնդի ցամաքի խոշոր մասերը Եվրասիա, Աֆրիկա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Ամերիկա, Անտարկտիդա, Ավստրալիա, մայրցամաքներն են: Չորս կողմից ջրով շրջապատված ցամաքի համեմատաբար փոքր մասերը կղզիներն են:
- Մայրցամաքների մակերևույթն են կազմում հարթավայրերը, բլուրները և լեռները:
- Երկրագունդը շրջապատված է օդի հաստ շերտով: Այն բաղկացած է թթվածնից, ազոտից, ածխաթթու գազից և այլ գազերից, ջրային գոլորշիներից և փոշու մասնիկներից:
- Բույսերը օդից վերցնում են ածխաթթու գազը՝ իրենց անհրաժեշտ սննդանյութեր պատրաստելու համար, և այդ ընթացքում «արտադրում» են թթվածին:

- Հողը գոյանում է քայքայված ապարների և հումուսի միախառնումից: Բույսեր աճեցնելու կարողությունը հողի ամենակարևոր հատկությունն է:
- Երկրի վրա ջուրը շարունակ շրջապտույտ է կատարում:
- Աղբյուրներից բխող ջրերից առաջացած առվակները ճանապարհին միախառնվում են և առաջացնում գետակներ, իսկ գետակները՝ գետեր: Երկրագնդի ցամաքի՝ ջրով լցված ընդարձակ գոգավորությունը կոչվում է լիճ:
- Ապարների այն տեսակները, որոնք մարդն օգտագործում է զանազան նպատակներով, կոչվում են օգտակար հանածոներ:
- Երկրի վրա բույսերն ու կենդանիները բազմազան ու բազմաթիվ են, որովհետև բազմազան են երկրագնդի բնական պայմանները՝ լույսը, ջերմությունը, խոնավությունը, հողը:
- Անկենդան և կենդանի բնությունը, բույսերն ու կենդանիները, տարբեր կենդանիները, մարդը և բնության բոլոր բաղադրիչները միմյանց հետ կապված են:
- Ցանկացած առարկա, կենդանի օրգանիզմ կարելի է կոչել մարմին: Մարմինը կազմված է նյութերից:

- Մեզ շրջապատող առարկաների, օդի, ջրի տաքության կամ սառնության չափը որոշվում է ջերմաչափով:
- Գիտնականները հարմարության համար սահմանել են չափման միավորների միասնական համակարգ:
- Աշխատանքը մարդու նպատակահարմար գործունեությունն է:
- Տնտեսության նպատակը մարդկանց բազմազան պահանջմունքները բավարարելն է:
- Մարդը չի կարող խուսափել բնական միջավայրը փոփոխելուց, քանի որ դրանով է բավարարում իր պահանջմունքները, բայցև պարտավոր է հնարավորինս վերականգնել իր՝ բնությանը պատճառած վնասները:
- Արդյունաբերության խոշոր ճյուղերն են՝ արդյունահանող արդյունաբերությունը, էլեկտրաէներգետիկան, մետաղաձուլությունը, մեքենաշինությունը, քիմիական, թեթև և սննդի արդյունաբերությունները:
- Գյուղատնտեսական արտադրանքը սննդամթերք է ծառայում մարդկանց և հումք՝ արդյունաբերության համար:
- Տրանսպորտի միջոցով է կատարվում մարդկանց և զանազան բեռների փոխադրումը տեղից տեղ:
- Փողը յուրատեսակ վճարման միջոց է, ապրանքների արժեքների չափման միավոր:

- Բնական միջավայրի շատ խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ է միավորել ողջ մարդկության ջանքերը:
- Երբ դու գտնվում ես բնության գրկում, փորձի՛ր ուշադիր լինել բնության գեղեցկությունների նկատմամբ, ոչինչ թող չվրիպի քո աչքից:
- Հայրենի տունը կառուցվում է միայն հայրենի հողի վրա՝ հայրենիքում:
- Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանված է 10 մարզերի, քաղաքային և գուղական համայնքների:
- Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներն են՝ զինանշանը, դրոշը և օրհներգը:
- Կան օրեր, որոնք տոնական են բոլորի համար. դրանք կոչվում են ազգային-պետական տոներ:
- Մեզանից հարյուրավոր կամ հազարավոր տարիներ առաջ տեղի ունեցած իրադարձությունները հաշվում ենք դարերով և հազարամյակներով: Մեր երկրում ընդունված է տարիների հաշվումը սկսել Հիսուս Քրիստոսի ծննդից:
- Մեր ժողովուրդը շատ նշանավոր գործիչներ է ունեցել՝ Հովհաննես Թումանյան, Հակոբ Կոջոյան, Հովհաննես Բաղրամյան, Մոնթե Մելքոնյան և շատ ուրիշներ:

- Մշակութային արժեքներ են՝ եկեղեցիները, խաչքարերը, հուշարձանները, մագաղաթյա ձեռագրերը և այլն:
- Մենք ունենք օլիմպիական չեմպիոններ, որոնցով հպարտանում ենք:
- Հորիզոնը ունի չորս հիմնական և չորս միջանկյալ կողմեր:
- Տեղանքի հատակագիծը տեղանքի գծապատկերն է վերևից դիտելիս:
- Ի տարբերություն հատակագծի՝ քարտեզը արտացոլում է առավել մեծ տարածքների փոքրացված պատկերը:
- Առևտրային կապերը, ռազմական արշավանքները և ճանապարհորդությունները էլ ավելի են ընդարձակել մարդկանց ճանաչողության սահմանները Երկիր մոլորակի վերաբերյալ:
- Մարդկության համար հսկայական նշանակություն են ունեցել դեպի Հնդկաստան տանող շուրջաֆրիկյան ծովային ճանապարհի, Ամերիկա աշխարհամասի, Ավստրալիայի, Անտարկտիդայի հայտնագործությունները և շուրջերկրյա ճանապարհորդությունները:
- Մարդկության համար նոր հեռանկարներ են բացում Համաշխարհային օվկիանոսի և տիեզերքի ժամանակակից ուսումնասիրությունները:

- Մեր իրավունքներն ու պարտականությունները փոխ-կապակցված են:
- Ժողովրդավարություն նշանակում է՝ «Ժողովրդի կառավարում ժողովրդի կողմից և ժողովրդի համար»:
- Մի՛ արա ուրիշներին այն, ինչ չես ցանկանում, որ քեզ անեն:
- Մեզանից յուրաքանչյուրը պետք է հարգի դիմացինի, ընկերոջ ճաշակը, կարծիքը, մտածելակերպը, սովորույթները:
- Քո ապագայի ընտրությունն ավելի շատ քո ձեռքերում է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դաս 25 Գյուղատնտեսություն 71

Դաս 26 Տրանսպորտ 75

Դաս 27 Ինչ է փողը 78

Դաս 28 Ինչպես փրկել երկրագնդի բնությունը 81

Դաս 29 Բնությունը մարդու ստեղծագործություններում 85

Դաս 30 Հարցեր և առաջադրանքներ «Բնությունը և մարդը» գլխի կրկնության համար 88

ԳԼՈՒԽ IV ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ 89

Դաս 31 Հայաստանն իմ հայրենիքն է: Հայաստանի Հանրապետություն 89

Դաս 32 Հայաստանի Հանրապետության մարզերը և քաղաքները 91

Դաս 33 Մեր պետականության խորհրդանիշները 94

Դաս 34 Մեր ազգային-պետական տոները 97

Դաս 35 Մեր հայրենիքի անցյալը և ներկան: Տարիների հաշվումը պատմության մեջ 100

Դաս 36 Նշանավոր գործիչներ և իրադարձություններ 102

Դաս 37 Մշակութային արժեքներ 105

Դաս 38 Մարզական նվաճումներ 108

Դաս 39 Հարցեր և առաջադրանքներ «Մեր հայրենիքը» գլխի կրկնության համար 112

ԳԼՈՒԽ V ՏԵՂԱՆՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ: ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ 114

Դաս 40 Հորիզոն, հորիզոնի կողմերը 114

Դաս 41 Ճանապարհորդությունները վաղ անցյալում 117

Դաս 42 Ճանապարհորդությունները դեպի Հնդկաստան և Չինաստան 121

Դաս 43–44 Ամերիկայի հայտնագործումը 125

Դաս 45 Ճանապարհորդություններ Աֆրիկայով 130

Դաս 46 Ավստրալիայի հայտնագործումը 132

Դաս 47 Անտարկտիդայի հայտնագործումն ու հետազոտումը 136

Դաս 48 Շուրջերկրյա ճանապարհորդություններ 140

Դաս 49 Ժամանակակից ճանապարհորդություններն օվկիանոսներում 145

Դաս 50 Ժամանակակից ճանապարհորդությունները տիեզերքում ... 149

Դաս 51 Հարցեր և առաջադրանքներ «Տեղանքի հետազոտում: Ճանապարհորդություններ և աշխարհագրական հայտնագործություններ» գլխի կրկնության համար 152

ԳԼՈՒԽ VI ԵՍ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ 153

Դաս 52 Իրավունք և պարտականություն 153

Դաս 53 Ժողովրդավարական հասարակություն 155

Դաս 54–55 Իրավունքների շուրջ ծագած հակամարտություններ 157

Դաս 56 Ինչպես ճիշտ հաղորդակցվել 160

Դաս 57 Կարծրացած ընկալումներ: Հանդուրժողականություն 162

Դաս 58 Փոփոխությունները մարդու կյանքում 164

Դաս 59 Մենք և ապագան 167

Դաս 60 Կրկնություն 169

Դաս 61–62 Ես արդեն գիտեմ (Ամփոփում) 170

Արմեն Հովսեփյան, Գուրգեն Հովհաննիսյան,
Նաիրա Տողանյան, Լաուրա Ավագյան

Ես և շրջակա աշխարհը

Դասագիրք հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի համար

Նկարիչ՝ Հասմիկ Կարապետյան

Սրբագրիչ՝ Աննա Կոբալյան

«ՄԱՆՄԱՐ» հրատարակչություն
Երևան, Ղ.Փարպեցու 9-7, հեռ. 53-79-82, 53-79-83
E-mail: manmar@manmar.am